# ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԲՌՆԱԴԱՏՈՒԱԾ ՔԱՐՈԶԻՉՆԵՐԸ (1937-1938 թթ.)
## (Ըստ Պետական Անվտանգութեան Կոմիտէի Փաստաթղթերի)

ՔՆԱՐԻԿ ԱՒԱԳԵԱՆ

*Ստալինեան բռնատիրութեան տարիներին (1924-1953) հայ ազգի անմեղ բնակչութեան հետ միասին նահատակուեցին հարիւրաւոր հոգեւորականներ, այդ թւում նաեւ՝ հայ աւետարանական քարոզիչներ։*

*Հայաստանի Հանրապետութեան Ազգային Անվտանգութեան Նախարարութեան (ՀՀ ԱԱՆ) արխիւում առկայ են 1937-1938ին բռնադատուած հայ աւետարանական 5 քարոզիչներից 4ի (Վերապատուելի Ռաֆայէլ Մելիք-Աղամեան, Պատուելի Տրդատ (Տիրատուր/Թաթոս) Մանուկեան, Եփրեմ Մկրտչեան, Արամայիս Տէր-Գալուստեան) վերաբերեալ գործեր[1]։ Յիշեալ գործերը պահւում են Նախարարութեան Կարճուած Գործերի Ֆոնդում (ԿԳՖ)։*

*Այդ փաստաթղթերին մեզ հնարաւորութիւն է ընձեռնուել ծանօթանալ անմիջականօրէն տեղում, շնորհիւ ՀՀ ԱԱՆ Հասարակայնութեան եւ Մամուլի Հետ Կապի Ծառայութեան պետ, գնդապետ, պատմական գիտութիւնների դոկտոր Արմենակ Մանուկեանի բարեհաճ աջակցութեան։ Մանուկեանն իր պատասխանատու ծառայութեանը զուգահեռ շարունակական աշխատանք է իրականացրել ԱԱՆ արխիւներից հանելով, ուսումնասիրելով եւ հրատարակելով հայ առաքելական եկեղեցու բռնադատուած հոգեւորականների, ինչպէս նաեւ քաղաքական հալածանքների ենթարկուած հասարակութեան միւս խաւերի ներկայացուցիչների վերաբերեալ փաստաթղթերը[2]։*

*Հանգամանօրէն վերլուծելով Հայաստանում ստալինեան բռնատիրութեան ողջ ժամանակաշրջանը եւ դրա ողբերգական հետեւանքները հայ հասարակութեան բոլոր շերտերի վրայ՝ Մանուկեանն իր աշխատութիւններում հայ առաքելական բռնադատուած հոգեւորականների կողքին վիճակագրական տուեալների եւ այլ տեղեկութիւնների հիման վրայ անդրադարձել է նաեւ երկրում առկայ կրօնական միւս ուղղութիւնների՝ հայ աւետարանական եւ հայ կաթողիկէ եկեղեցիների, ինչպէս նաեւ՝ տարբեր ազգերի ներկայացուցիչների նկատմամբ կիրառուած քաղաքական բռնաճնշումներին։*

*Արեւելահայ իրականութեան մէջ աւետարանական գաղափարների սկզբնաւորման ու տարածման, ինչպէս նաեւ առաջին քարոզիչների գործունէութեան (մինչեւ 1920ականների վերջ) մասին տուեալ հանգամանալից ներկայաց-*

րել է հայ ավետարանականության երախտավոր պատմագիր Վեր. Եղիա Քասունին[8]:

Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում ավետարանականության ամբողջական պատմությունը (սկզբնավորումից մինչև մեր օրերը) ներկայացնելու շնորհակալ աշխատանքն են իրականացրել Առաքել Ղազարյանը և Վեր. [illegible] Ռենե Լևոնյանը[9]: Ներկայացնելով Խորհրդային Հայաստանում ավետարանական եկեղեցու գործունեության արգելման դրդապատճառները՝ [illegible], [illegible] 1937-1938թթ. բռնադատված հայ ավետարանական գործիչներին՝ նշելով, որ առանձին հետազոտման են կարոտ «...1920-50-ական թթ.-ին հալածված, բռնադատված, աքսորված հայ ավետարանականներին վերաբերող նյութերը»[10]:

Այդ բաց նպատակով ձեռնամուխ ենք եղել լույս աշխարհ հանելու հայ ավետարանական բռնադատված գործիչների վերաբերյալ Պետական Անվտանգության Կոմիտեի (ՊԱԿ) արխիվային այն փաստաթղթերը, որոնց ամբողջությունը հրատարակվում են առաջին անգամ:

1920ական թվականներին ողջ Խորհրդային Միությունում, ինչպես նաև Հայաստանում, եկեղեցիների փակումով, կողոպտումով և ավերումով սկզբնավորված կրոնահալածական-աթեիստական արշավը շատ շուտով տարածվեց է նաև հայ հոգևոր սպասավորների վրա՝ առանց դավանանքային խտրության:

Այդ պայմաններում հայ ավետարանական գործիչներից շատերին արտաքսեցին Հայաստանից, կամ էլ՝ աքսորեցին Հյուսիսային Սիբիր: Առաջին աքսորված հայ ավետարանականների թվում էր նաև Արարատյան Հայ Ավետարանական Միության նախագահ, [illegible] քարոզիչ և հայտնի ավետարանական գործիչ Վեր. Վահան Միքայելյանը, որը 1928թ. աքսորվել էր Սիբիր և այնտեղ էլ կնքել իր մահկանացուն[11]: Բայց ԱԱԾ-ում նրա վերաբերյալ գործ դեռևս չի բացահայտվել:

Միացյալ Պետական Քաղաքական Վարչության (ՄՊՔՎ) նախագահի տեղակալ Գ. Յագոդայի կողմից 1930 Մարտի 22-ին հաստատված «Եկեղեցական շարժման վիճակը և հոգևորականների [illegible] «[illegible]» [illegible] շրջաբերականում գրված էր. «Սոցիալիստական շինարարության հսկայական թափը ԽՍՀՄ-ում, կոլտնտեսային շարժման բուռն զարգացումը և կուլակների, որպես դասակարգի լիկվիդացման գործընթացը, այժմ պահանջում է որակական փոփոխություններ, մինչև այժմ մեր կողմից եկեղեցականների նկատմամբ տարվող աշխատանքում:

Դասակարգային պայքարի սրման հետ կապված, շատ եկեղեցական կազմակերպություններ բառացիորեն դուրս են եկել գործողության այն շրջանակներից, որոնցում նրանք առաջ զբաղված էին, և դարձել են բացահայտ

հակայեղափոխական կազմակերպությունները՝ իրենց առաջ դնելով քաղաքական խնդիրներ:

...Աղոթատների փակումը, հարկերը պաշտամունքի սպասարկուների վրա, կուլակաթափության ինստիտուտի անողոք կիրառումը շատ արագ ակտիվացրին բոլոր հոսանքների քահանաներին...: Նրանք սկսեցին չափազանց ակտիվ դիմադրել դրան: Համընդհանուր կոլեկտիվացման շրջաններում, որտեղ եկեղեցու լիկվիդացման կամպանիան գնում էր եռանդուն տեմպով, մենք կարող ենք հաստատել, որ տարբեր եկեղեցական ուղղությունների պատկանելը, համարյա ոչ մի դեր չի խաղում եկեղեցականների քաղաքական արտահայտություններում, բոլոր քահանաները այստեղ ներկայանում են որպես սոցիալիստական շինարարության չարացած և ակտիվ թշնամիներ, և ամեն տարբերություն հոսանքների միջև, այստեղ փաստորեն հարթվում էր»[7].

* * *

*ՊԱԿ-ի արխիվային գործերում քննության նյութերն ու արձանագրությունները կազմված և ստորագրված են բավականին անփույթ՝ առանց ժամանակագրական հաջորդականության պահպանման, խախտելով [illegible], իսկ դատավարությունների գերակշիռ մասը ներկայացված է կիսագրագետ ռուսերեն, որոնք հայերենով կատարված հարցաքննությունների կամային թարգմանություններն են: Հետևաբար, ռուսերենից հայերեն մեր կատարած մանրակրկիտ ու բառացի թարգմանություններում այնտեղ եղած անհարթ ոճը՝ ՊԱԿ-ի քննիչների կազմած արձանագրությունների շարադրանքի պարզունակ ոճը, իր ժամանակի համար բնորոշ լեզուն, շարահյուսական և տերմինաբանական անճշտությունները (եկեղեցական և կրոնական տերմինների չիմացություն, բառացիական և կաղապարված [illegible] անհարթություն ևն.):*

*Գործերում փաստերի և տվյալների ոչ-ճիշտ ներկայացման խոսք* «...լուսագոյնս վկայում է այն մասին, թէ ինչ ձևով էր աշխատում խորհրդահայկական մեքենան ստալինեան մենատիրութեան տարիներին և միաժամանակ նախազգուշացնում հետազոտողներին, որ մեծ վերապահութեամբ մօտենան թէ այս և թէ այդ տարիների միւս գործերում գտնուող փաստաթղթերի բովանդակութեանը»[8].

*Հարցաքննության նյութերին ծանոթանալիս պարզ է դառնում, թէ ինչպիսի [illegible], [illegible] ու կտտանքներով են [illegible] Հայոց եկեղեցու [illegible], որոնք [illegible] [illegible], փաստաթղթեր [illegible], առանց [illegible] արձանագրությունները կազմել և ստորագրությունները կորզել, վկաներից իրենց համար ցանկալի և դասավորված ցուցմունքներ պոկել, ապա՝ միանման [illegible] գործերն ուղարկել Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի (ՆԳԺԿ) Եռյակի դատաստանին:*

Կրանին, Ռուսաստանի և Հայրենիքին նվիրված հայ ավետարանական քարոզիչներից ոմանք հարկադրված ընդունել են իրենց վրա բարդված խանգարումները, իսկ ոմանք էլ՝ ոչ։ Սակայն գաղափարը, այնուամենայնիվ, ներխուժել է նրանց։ Այդ մասին Մանուկյանը գրել է. «...Իրողություն է, որ այդ տարիներին, ներքին կարգադրությամբ, քննչական մարմիններին թույլատրված էր կտտանքների կիրառումը, իսկ, երբ դրան ավելացնենք, այն որ միայն մեղադրյալի խոստովանությունն իր «կատարված յանցագործութեան» մասին օրէնսգէտի համար բավարար հիմք էր՝ նրան դատապարտելու, ապա պարզ կը դառնայ, թէ խիղճն ու բարոյականութիւնը կորցրած քննիչը ինչպիսի «փայլուն» արդիւնքների կարող էր հասնել «ժողովրդի թշնամիների» բացայայտելու [illegible]»*.

Միաժամանակ, դատապարտվածները և նրանց հարազատները, ապրելով հասարակական սահմանափակումներ, արդարության փնտրտուքներով խնդրագիր-նամակներով շարունակել են դիմել երկրի բարձրաստիճան ղեկավարներին՝ ԽՍՀՄ ԳԳ Գլխավոր դատախազ Ռոման Ռուդենկոյին, ԽՍՀՄ Ներքին Գործերի ժողովրդական կոմիսար Լավրենտի Բերիային, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահ Միխայիլ Կալինինին, արդարացման յույսով, սակայն՝ ապարդյուն։

Հայ ավետարանական քարոզիչների նկատմամբ առաջադրված մեղադրանքներն ու կիրառված պատիժներն ընդհանուր առմամբ համանման էին 1930-ականներին բռնադատված իրենց մյուս հայրենակիցներին ներկայացված մեղադրանքներին (հակասովետական ագիտացիա և պրոպագանդա, կրոնական քարոզչություն, հակահեղափոխական, տրոցկիստա-զինովևյան հակաբոլշևիկյան գործունեություն, ահաբեկչական խմբակցություններին և ֆաշիզմին գործակալ-լրտեսություն և այլն) և կիրառված պատիժներին (3-5 և մինչև 10 տարի ազատազրկում կամ աքսոր և կամ գնդակահարություն)։

Այդուհանդերձ, հայ ավետարանական քարոզիչներին ներկայացվող մեղադրանքներն ունեին նաև իրենց առանձնահատուկ խորապատկությունները։ Այսպես, նրանց մեղադրում էին արտասահմանից (Ֆրանսիայից, ԱՄՆ և այլն) հոգևոր դրամականություն, ինչպես նաև, որպես աշխատավարձ, փաստացի ստանալու, արտասահմանում ծնված կամ ապրած լինելու, աղանդավորների հետ հանդիպումներ ունենալու, հոգևոր և լրտեսական գործունեություն ծավալելու, Սովետական Միությունը որպես անհատական երկիր ներկայացնելու և հասարակության լայն շերտերին (նաև՝ պատանիներին, երիտասարդներին, կանանց) հակասովետական քարոզչության մեջ ներգրավելու համար և այլն։

Ստալինի մահից հետո թույլատրվել է անձամբ կամ հարազատների միջոցով դիմել համապատասխան մարմիններին վերանայելու անհիմն բռնադատվածների գործերը և վերականգնելու նրանց բարի անունը։ 1955-60-ականներին ՀՍՍՀ Գերագույն Դատարանի կողմից վերանայվել են ՊԱԿ-ի որոշ գործեր, ընդ որում նաև՝ բռնադատված հայ ավետարանական 4 քարոզիչների գոր-

ների։ Նրանց վերաբերյալ գործերը կարճվել են հանցակազմի բացակայության պատճառով և նրանք բոլորն էլ արդարացվել են հետմահու։

Այսպիսով, հայ ավետարանական եկեղեցու քարոզիչները ևս կիսել են իրենց հայրենակիցների բաժին ընկած ժամանակաշրջանի ողջ դժվարությունները ու հալածանքները։ Հալածանքներ, որոնք, անկախ ընդգրկած բանտարկյալների թվաքանակից, մարդկության դեմ ուղղված ոճրագործություն էին, արժանի՝ համընդհանուր դատապարտման, որպեսզի նման երևույթներ պատմության մեջ այլևս երբեք չկրկնվեն։

* * *

Ստորև ներկայացնում ենք հայ ավետարանական բանտարկյալ քարոզիչների համառոտ կենսագրականները, որոնք քաղել ենք ԱԱԾում պահվող նրանց գործերի նյութերից։

Վերապատուելի Ռափայէլ Կարապետի Մելիք-Աղամեան (ծնուած՝ 01.10.1872, Նախիջեւանի գաւառի Վերին Ագուլիս գիւղ - գնդակահարուած՝ 08.10.1937ին, Լենինական (այժմ Գիւմրի) - 1894ին աւարտել է Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանը։ Եղել է Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Իտալիայում, Շուեյցարիայում։ Վարդապետի աստիճանով դասաւանդել է Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանում։ 1907-1909ին սովորել է (որպէս ազատ ունկնդիր) Գերմանիայի Մարբուրգ և Հալլէ քաղաքների Աստուածաբանական ֆակուլտետներում, ապա՝ Թիֆլիսում զբաղուել ուսուցչութեամբ և աշխատել Հորիզոն թերթի խմբագրութիւնում։ 1909ին հրաժարուել է վարդապետութեան աստիճանից։ 1912-1915ին ուսուցչութիւն է արել Վանի Վարժապետանոցում, ապա՝ Ալեքսանդրապոլում (այժմ Գիւմրի)։ 1921-1923ին եղել է կրօնի ուսուցիչ Ամերիկեան որբանոցներում, ապա՝ տեղի 17րդ դպրոցի վարիչ։ 1924-1926ին Գերմանիայի Միսիոներական Կազմակերպութեան առաջարկով դարձել է Լենինականի Աւետարանական (Մկրտչեան) Եկեղեցու քարոզիչ, ապա՝ նաեւ համայնքի նախագահ։ 1925ից աւետարանական դասընթացներ է իրականացրել Հայ Առաքելական Եկեղեցում։ Նիւթական աջակցութիւն է ստացել Գերմանիայի հայ աւետարանական համայնքից։ 1928ին հակայեղափոխական-կրօնական ակտիւ գործունէութեան մեղադրանքով 3 տարով աքսորուել է Սոլովկի։ 1931ին վերադառնալով գերմաներէն է դասաւանդել Լենինականի Տեքստիլ Ֆաբրիկայում, Կաթի Տեխնիկումում, Մանկավարժական Ինստիտուտում, թիւ 6 դպրոցում, աշխատել է Բանւոր և Մանկավարժ թերթերի խմբագրութիւններում որպէս թարգմանիչ և սրբագրիչ։ Ամուսնացած էր Արփենիկի հետ, ունէր երեք զաւակ։ 1937 Հոկտեմբերին դատապարտուել է գնդակահարութեան։ 1957 Դեկտեմբերին նրա վերաբերեալ գործը կարճուել է հանցակազմի բացակայութեան պատճառով։

Պատուելի Տրդատ (Տիրան/Թաթոս) Գրիգորի Մանուկեան (ծնուած՝ 1878 Վաղարշապատի շրջանի Մամագար (այժմ Գեղակերտ) գիւղում - գնդակա-

հարում՝ 13.03.1937թ., Երևան)։ 1897-1900թթ. որպես կրտսեր ենթասպա ծառայել է Կարսի բանակում։ Կրթված(?)։ 1923թ-ից եղել է Անտառաբանական կոմու-ֆիան(?) Համայնքի գիտնական եւ Վաղարշապատի շրջանի Սամագար գյուղում քարոզիչ։ Կուլակաթափված է արվել եւ 1931թ-ին ազատազրկվել 5 տարով, սակայն 1933թ-ին առողջական պատճառով ժամկետից շուտ ազատվել է։ Աքսորից վերադառնալով՝ շարունակել է անտառաբանական գործունեությունը Երևանի անտառաբանական համայնքում։ Աշխատել է որպես բանվոր։ Ամուսնացած էր, ունէր մեկ զավակ։ 1938 Մարտին դատապարտվել է գնդակահարության։ 1957 Դեկտեմբերին նրա վերաբերյալ գործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով։

Եփրեմ Ավետիքի(?) Միրզոյան (ծնված 1886 Վաղարշապատի շրջանի Վաղարշապատ գյուղում - մահացած՝ 1942թ., Սվերդլովսկի մարզ, Հ. Տալը(?))։ 1915-1916թթ. ցարական բանակում ծառայել է որպես գնդացիրի շարքի զրակիր։ Ավարտելով միջնակարգ 1925 որպես ուսուցիչ աշխատել է Վաղարշապատի շրջանի Վաղարշապատ, Սամագար, Ջրառատ(?) գյուղերում, իսկ 1925-1930թթ.՝ վիճակագիր՝ Վաղարշապատի Շրջանային Գործկոմում(?)։ 1931թ-ին կուլակաթափ է արվել եւ փոխադրվել Երևան։ Ընդհուպ մինչև ձերբակալումը որպես հաշվապահ եւ վիճակագիր աշխատել է Երևանի քաղաքային շինարարությունում, ինչպես նաև՝ տնտեսագիտություն է դասավանդել երեկոյան բանվորական համալսարանում։ 1933թ-ից քարտուղար է Երևանի անտառաբանական համայնքում, եղել նույն համայնքի խորհրդի անդամ։ Ամուսնացած էր Աշխենի(?) հետ, ունէր չորս զավակ։ 1938 Մարտին դատապարտվել է 10 տարվա ազատազրկման՝ ուղղիչ աշխատանքային ճամբար, որտեղ եւ հիվանդության պատճառով մահացել է 1942 Դեկտեմբերին։ 1957 Դեկտեմբերին նրա վերաբերյալ գործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով։

Երվանդ Գալուստի Տէր-Գալուստեան (ծնված 1893 Վան - մահացած՝ 1943թ., Սվերդլովսկի մարզ, Իվդել(?)) - 1915թ-ին ընտանիքով գաղթել է Երևան։ Արհեստով դերձակ էր։ 1930թ-ից Երևանի անտառաբանական համայնքի քարտուղար էր, իսկ 1938թ-ից մինչև ձերբակալվելն՝ նույն համայնքի խորհրդի անդամ։ Ամուսնացած էր Կատարինեի(?) հետ, ունէր հինգ զավակ։ 1938 Մարտին դատապարտվել է 10 տարվա ազատազրկման՝ ուղղիչ աշխատանքային ճամբար, որտեղ եւ մահացել է 1943թ-ին։ 1961 Յունիսին նրա վերաբերյալ գործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով։

## ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳՈՒԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՖՈՆԴ, Գործ 4194, ԿԳՖ 1, 1982

Անդրկովկասի ԽՖՍՀ ՆԳԺԿ, Քննչական գործ թիւ 19375 (Պահել ընդմիշտ) (ռուս.)

**Ռաֆայէլ Կարապետի Մելիք-Աղամեանի**
**նկատմամբ յարուցուած մեղադրանքի շուրջ,**
**սկսուած՝ 8 Օգոստոսի, 1937ին - աւարտուած՝ 13 Սեպտեմբերի, 1937ին**
**(հատոր I, 1 հատորով գործ)**

*Հետախուզական հաղորդագրութիւն թիւ 518, 09.03.1937, Լենինական, IV բաժին* (ռուս.)

Հարցաքննութեան ժամանակ նախկին փաստաբան Ռաֆայէլ Մելիք-Աղամեանը ՀՍՍՀ Սահմանադրութեան առիթով յայտարարել է, որ Սահմանադրութիւնը նախորդի նման նորից կը ձախողուի, քանզի քուէարկութիւնը գաղտնի պիտի լինի, սակայն բոլշեւիզմին մօտ կանգնած կոմունիստները, որոնք պիտի 'որոշեն' ում համար քուէարկել. ինչպէս դաշնակների ժամանակ կադէտների, կոմունիստների եւ այլոց թեկնածութիւնները եւս դրուել են, բայց նրանք չեն անցել, իրենցն է անցել (p. 1):

* * *

*Հետախուզական հաղորդագրութիւն թիւ 1370, 17.07.1937, Լենինական, IV բաժին* (ռուս.)

Գերմանական լեզուի դասատու Մելիք-Աղամեան Ռաֆայէլը, նախկին փաստաբան, աւարտել է Էջմիածնի հոգեւոր ակադեմիան: Եղել է արտասահմանում՝ Գերմանիայում: Մինչեւ 1928 աշխատել է Լենինականում՝ Անեցեանում, որ դասաւանդել է «Աստուծոյ օրէնք» առարկան: ՆԳԺԿ օրգանների կողմից բանտարկուել է եւ նստել 6-8 ամիս, որպէս կաթոլիկների (*խմբ՝ առաքելականների* - Ք.Ա.) կրօնական աղանդի ղեկավար, որն այն ժամանակ կրօնական քարոզ էր իրականացնում: Ուժեղ հաւատացեալ մարդ: Դասաւանդում է մանկավարժական ինստիտուտում, կարճաժամկէտների տեխնիկումում եւ թիւ 6 դպրոցում:

IV բաժնի օպերատիւ լիազօր,
Պետ[ական] անվտ[անգութեան] միլիցիայի լէյտենանտ Միրզոյեան
ՆԳԺԿ Լենինականի քաղաքային բաժնի
Պետ[ական] անվտ[անգութեան] աւագ լէյտենանտ Մարգարեան (p. 2)

* * *

*Մեղադրական եզրակացութիւն* (ռուս.)

Թիւ 245 գործի առիթով Լենինականի համայնքի առեւտրաարդիւնական-գիտատոմեանների վրայ - ԲՈԼՈՐԻ,

Ռաֆայէլ Կարապետի ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ, 56 տարեկան,
եւ նոյն համայնքի անդամ
Միհրան Խաչատուրի ԿՈՏԻԿԵԱՆԻ վրայ, 38 տարեկան,
որոնք մեղադրւում են լրտեսութեան եւ Արեւմտա-եւրոպական երկրների ազդեցութեան տարածում իրականացնելու աշխատանքների մէջ, այսինքն՝ յանցագործութեան մէջ, նախատեսուած յօդ[ուած] 63 ՀՍՍՌ ՔՕ, հրատ[արա]կութիւն] 27 տ[արուայ] (1927 թ. - Ք.Ա.): 25րդ տարում (1925 թ. - Ք.Ա.) աւետարանական-քրիստոնեաների Անդրկովկասեան համագումարից յետոյ, որը տեղի էր ունեցել Թիֆլիս քաղաքում, Առաքելական համայնքի մի մասը կազմող Լենինականի համայնքը, ծանօթանալով եւ կազմել է ինքնուրոյն համայնք, որը յետագայում խզել է բոլոր տեսակի կապերը Առաքելական համայնքի հետ՝ կապ հաստատելով Անդրկովկասեան աւետարանական-քրիստոնեաների «ՎՍԽԿ» բաժանմունքի հետ:

1926ի սկզբին հայ-գրիգորեանական եկեղեցու նախկին վարդապետ՝ Ռաֆայէլ Մելիք-Ադամեանը, որը 1924ի սկզբին Գերմանիայի միսիոներական կազմակերպութեան առաջարկով անցել է Լենինականի աւետարանական-քրիստոնեաների եկեղեցի, իսկ յետագայում ընտրուել է վերոյիշեալ համայնքի նախագահ, սիստեմատիկ կերպով ստացել է դրամական օգնութիւն Գերմանիայի միսիոներական կազմակերպութեան կողմից ի դէմս Արմենակ ՊԱՐՈՆԻԿԵԱՆԻ: Սա բաւականին կասկածելի անձնաւորութիւն է եւ, ձերբակալուած Միհրան ԿՈՏԻԿԵԱՆԻ ցուցմունքների համաձայն, բաւականին մօտ եւ կասկածելի անձնաւորութիւն է, որը կապ ունի Գերմանիայի վերին խաւերի հետ: Ռաֆայէլ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԸ դիրեկտիւներ է ստացել Արմենակ Պարոնիկեանից հայկական եկեղեցում միսիոներական ծառայութիւն անցկացնելու վերաբերեալ, այդ նպատակի համար ամէն ամիս ստացել է 50ից մինչեւ 150 դոլար: Բացի այդ, Ռաֆայէլ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԸ մի քանի անգամ ստացել է 31, 11, 29ական դոլարներ գերմանական հողից:

Միհրան ԿՈՏԻԿԵԱՆԸ Հայաստան է ժամանել 1921ին եւ իր մշտական բնակութեան վայրը հաստատել է Լենինականում: Մասնագիտութեամբ նա աշխատել է Լենինական քաղաքի տարբեր ֆաբրիկաներում եւ գործարաններում: Նա իր կրթութիւնը ստացել է Գերմանիայում «Ֆրանկֆուրտ-Մայնի» միսիոներական կազմակերպութեան միջոցով: Եւ ցոյց է տուել ամէն տեսակի աջակցութիւն վերոյիշեալ կազմակերպութեան ղեկավարին՝ Ռ. Շմիտարին, որը տեղաւորել է նրան աշխատանքի եւ յաճախակի հանդիպել է նրա հետ: Նա (Միհրան Կոտիկեանը - Ք.Ա.) բազմիցս դիմել է վերոյիշեալին օգնութեան համար: Փաստօրէն Միհրան Կոտիկեանը ապրում էր միսիոներական կազմակերպութեան միջոցների հաշւին: Մինչեւ 1916 նա բողոքական հպատակ էր, ներկայումս ինչ-որ ձեւով դարձել է պրոպագանդիստ: Միհրան ԿՈՏԻԿԵԱՆԸ նամակագրութիւն ունէր միսիոներական կազմակերպութիւնների ներկայացուցիչների հետ, որոնց հաղորդել է Լենինականի համայնքի գործունէութեան մասին, բողոքել է այն մասին, որ իրեն հետապնդում են իր կրօնական համոզմունքների համար եւն.:

Այն բանից հետո, երբ Ռաֆայել ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆԸ և Միսաք ԿՈՍՏԻԿՅԱՆԸ մտել են Լենինականի ավետարանական-քրիստոնեաների համայնք, համայնքը ակտիվորեն ուժեղացրել է իր գործունեությունը, կապ է հաստատել Գերմանիայի միսիոներական կազմակերպության հետ, ֆինանսավորվել է արտասահմանից: Վերոյիշյալների գործունեության շնորհիվ Լենինականում կազմակերպում են պատանեկան, կանանց խմբակներ, որոնք հակադրվում են մեր հասարակական և կուսակցական կազմակերպություններին: Վերոյիշյալի հիման վրա, Ռաֆայել ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆԸ և Միսաք ԿՈՍՏԻԿՅԱՆԸ ձերբակալվում են Լենինական քաղաքում 19/X ս.թ., առաջադրվում են Հայկական ՍՍՀ և կանչվում են քննության որպես ամբաստանյալներ 63 հոդվածով:

Քննության ընթացքում Ռաֆայել ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆԸ, մերժելով իր մեղավորությունը, վկայել է.

«1900թին ճամփորդել եմ արտասահմանում մոտավորապես 3 ամիս և ժամանակի այդ ընթացքում հասցրել եմ լինել Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Իտալիայում և Շվեյցարիայում: Մեկնել եմ յատուկ ներկայ լինելու համաշխարհային ցուցահանդեսին: Ժամանակի այդ ընթացքում ես դասավանդել եմ Էջմիածնի հոգևոր ակադեմիայում և եղել եմ փոխանորդ վարդապետի աստիճանում: 1907թին մեկնել եմ Գերմանիա, Մարբուրգ քաղաք, որտեղ ազատ ունկնդիր եմ եղել համալսարանում, աստվածաբանական ֆակուլտետում: 1909թին ես Էջմիածնում Գերմանիայից նամակ եմ ստացել և հրաժարվել եմ աստիճանից:

Գերմանիայից հետո ժամանել եմ Թիֆլիս, որտեղ դասավանդել եմ՝ միաժամանակ աշխատելով «Հովիվի» խմբագրությունում: 1912թին մեկնել եմ Վան, որտեղ գտնվել եմ մինչև 1915, որտեղից մեկնել եմ Լենինական և ուսուցչություն արել: Սովետական կարգերի ժամանակ՝ 1921թից մինչև 1923, ուսուցիչ եմ եղել Ամերիկյան կոմիտեում Աստծու Օրենքի գծով: Հենց որ արգելվեց Աստծու Օրենքի դասավանդումը, ես նշանակվել եմ 17րդ որբանոցի վարիչի պաշտոնում: 1925թից, կրճատումից հետո, զբաղվել եմ յատուկ ավետարանի դասատվությամբ հայ-գերմանական եկեղեցում, իսկ 1926թից մտել եմ Լենինականի ավետարանական-քրիստոնեաների համայնքը: 1924 և 1926 թթ. ընթացքում ես որոշակի պաշտոն չունեի, բայց զբաղվում էի Գերմանիայից Արմենակ ՊԱՐՈՆԻԿՅԱՆԻ կողմից ուղարկված միջոցներով, որը հանդիսանում է «Բարեսիրական Ընկերության» նախկին անդամ և միաժամանակ ներկայացուցիչ՝ Գերմանիայում ավետարանական համայնքի ղեկավար:

ՊԱՐՈՆԻԿՅԱՆԸ Վիեննայում «Բարեսիրական Ընկերության» անդամ էր, սակայն ինչպես յայտնվել է Գերմանիայում՝ տեղեկություն չունեմ, սակայն գիտեմ, որ Գերմանիա է մեկնել կամ 1910 կամ 1911 թվին: Արմենակ Պարոնիկյանին ես չեմ տեսել, բայց իմ ծանոթ գերմանացի Ֆրաու Ռանգայը, ունենալով իմ հասցեն, 1908թին ՊԱՐՈՆԻԿՅԱՆԻ Գերմանիա եկած ժամանակ հայտնել է նրան, որ Գերմանիայում է եղել մեկ հայ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ, որը հանդիսացել է քրիստոնեայ: Դրանից հետո Արմենակ ՊԱՐՈՆԻԿՅԱՆԸ

սկսել է ինձ հետ գրագրություն իրականացնել: Կարող եմ ասել, որ մինչև 1923 ես ՊԱՐՈՆԻԿԵԱՆԻ երեսը չեմ տեսել, բայց ծանոթացել եմ նրա հետ 1923ին Լենինականում, որ նա ժամանել էր ՕԿԱի համագումարին: Արմենակ ՊԱՐՈՆԻԿԵԱՆԸ Գերմանիայից ինձ հաղորդել է, որ Գերմանիայում գոյություն ունի ադվենտիստների ընկերություն հայերի շրջանում իրականացման (քարոզելու - Ք.Ա.) համար, և խնդրեց գնալ իր ճանապարհով:

1924ից մինչև 1926 ՊԱՐՈՆԻԿԵԱՆԻՑ ստացել եմ դրամական օգնություն, քանի որ Լենինականում իրականացնում (քարոզում - Ք.Ա.) էի ադվենտիստի գաղափարը: Ինչքան դրամ է նա ինձ ուղարկել՝ չեմ հիշում: 1926ից, այն բանից հետո, երբ ես մտա ադվենտիստական-քրիստոնեաների համայնքը, նա դադարել է ուղարկել դրամական օգնություն: Իսկ նամակագրությունը նրա հետ ես շարունակել եմ ունենալ: Ես ՊԱՐՈՆԻԿԵԱՆԻՆ տեղեկացրել եմ այն աշխատանքի մասին, ինչ ես իրականացնում եմ Լենինականում, քանի որ նա հետաքրքրվել է: ՊԱՐՈՆԻԿԵԱՆԸ ինձ չի առաջարկել իրեն որևէ տեղեկություններ հաղորդել, բայց որքան ես հիշում եմ, նա առաջարկել է աշխատանք իրականացնել հայ-գրիգորյանական եկեղեցում, քանի որ իր կողմից կազմակերպված միությունը նպատակ էր հետապնդում աշխատանք իրականացնել հայկական եկեղեցում, և պնդել է՝ չբաժանվել դրանից: 1923ին Լենինականում նա ինձ հանձնել է գերմաներեն լեզվով 5 կամ 6 գրքույկ: Չեմ հիշում երբ, բայց ստացել եմ Ամերիկայից՝ Արշավիր ԱՒԵՏԻՍԵԱՆԻՑ, 150 դոլար, ընդ որում այդ փողերը բաշխել եմ ես, Միհրան Տէր-Սարգսեանի (ներկայումս՝ Դիլիջանում) և մահացած ՂԱԶԱՐԵԱՆԻ (հավանաբար նկատի ունի Ղազար Փանոսեանին - Ք.Ա.) կնոջ միջև: Արշավիր ԱՒԵՏԻՍԵԱՆԸ Վիեննայի հայ է և որպես առաջ ընկեր ինձ նյութական օգնություն է ցույց տալիս:

Պատանեկան խմբակներ գոյություն չեն ունեցել, բայց կանանց խմբակ գոյություն է ունեցել 1927ից: Նրանց շրջանում իրականացվում է զուտ կրոնական աշխատանք, բայց պետք է ասել, որ կանայք նաև զբաղվել են ձեռագործով և ստացված փողերը ներդրել են համայնքի գանձարանը:

Ինձ հայտնի է, որ ՊԱՐՈՆԻԿԵԱՆԻ կինը գերմանուհի է և միակ դուստրն է հայտնի կապիտալիստի և կոմսի, որի անունը և ազգանունը ինձ հայտնի չէ: Այդ կոմսը Լեհաստանում տեղակայված ունի կալվածք, որ և [գերմանուհին] տեղափոխվել էր ապրելու Արմենակ ՊԱՐՈՆԻԿԵԱՆԻ հետ ամուսնանալուց հետո: Արմենակ ՊԱՐՈՆԻԿԵԱՆԸ միշտ ձգտում էր և ձգտում է չզատվել հայ-գրիգորյանական եկեղեցուց և աշխատանք իրականացնել այդ եկեղեցու ներսում և աստիճանաբար գնալ հայկական եկեղեցու բարեկարգմանը: Ընկերության անդամները, որի գլուխ կանգնած է Արմենակ ՊԱՐՈՆԻԿԵԱՆԸ, հանդիսանում են գերմանացիները, բայց գտնում եմ, որ նրանց շրջանում կան նաև հայեր: Արմենակ ՊԱՐՈՆԻԿԵԱՆԻ խոսքերով անդամների թիվը հասնում է մի քանի հազար մարդու:

* Սկզբնապես հայ-գրիգորյանական եկեղեցում աշխատանք իրականացնելու համար ես Արմենակ ՊԱՐՈՆԻԿԵԱՆԻՑ ստացել եմ ամիսը 25ական

դոլար, իսկ Ամերիկայից կրճատումներից յետոյ ես խնդրել եմ ինձ ուղարկել ամի-սը 50ական դոլար: 1927ին Արմենակ ՊԱՐՈՆԻԿԵԱՆԻՑ ես դրամ չեմ ստացել, սակայն ստացել եմ Ամերիկայի փոխանցման բաժնից 29 դոլար, սակայն թէ դրամը որտեղից էին՝ ինձ յայտնի չէ: 1925/1926 թթ. առաջին անգամ ես ստացել եմ 35 դոլար եւ երկրորդ անգամ՝ 11 դոլար, սակայն ով է ուղարկել այդ դրամը, ես չգիտեմ, սակայն ՊԱՐՈՆԻԿԵԱՆԻ նամակից իմացայ, որ 35 դոլար փոխանցել է ամն գերմանացի բողոքական քարոզիչ (անունը չի նշուած - Ք.Ա.): Ինչ վերաբերում է 11 դոլարին, մինչեւ օրս էլ ինձ յայտնի չէ, թէ ով է փոխանցել: Իմ կապը Արմենակ ՊԱՐՈՆԻԿԵԱՆԻ եւ այլոց հետ չի կարելի վերագրել ազգ համայնքին, քանզի ես գործել եմ որպէս անհատ: Արմենակ Պարոնիկեանից ես դրամը ստացել եմ մինչեւ 1926ի Յուլիսը ներառեալ: Բացի այդ, ստացել եմ 250 դոլար Նիւ Եորքից՝ Կարապետ Մարկոսեանից, որից 80 դոլարը ստացել եմ ես, 120 դոլարը՝ Միհրան ՏԷՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆԸ, իսկ 50 դոլարը փոխանցուել է Ղազար Փոստանեանի կնոջը եւ այլոց»:

Միհրան Կոստիկեանն իրեն մեղաւոր չի ճանաչում: Նախնական հարցաքննութեան ժամանակ նա կտրականապէս յայտարարել է, որ ոչ մի կապ արտասահմանի հետ, որեւէ մէկի հետ չի ունեցել: Յետագայում Միհրան Կոստիկեանը ցուցմունք է տուել. «1908ին, մայրական հետապնդելով շարունակել իմ ուսումնառութիւնը, ես Վանից մեկնեցի Կոստանդնուպոլիս, որտեղից 1910ին հասայ Գերմանիա: Սովորել եմ Բեռլինի պոլիտեխնիկումում, բայց չեմ աւարտել, նկատի ունենալով իմպերիալիստական պատերազմը: Մինչեւ 1918 ծառայել եմ որպէս վարպետ տարբեր գործարաններում: 1919ին կրճատուել եմ եւ ինձ առաջարկուել է, որպէս օտարահպատակի, հեռանալ Գերմանիայից: 1921ին ես հեռացայ Գերմանիայից, մտադրութիւն ունէի հաստատուել Հայաստանում, բայց ճանապարհները փակ էին եւ ես հարկադրուած էի մնալ Թիֆլիսում: Հենց որ աւարտուեց քաղաքացիական պատերազմը, ես մեկնեցի Լենինական, ծառայում էի Ամերիկեան կոմիտէում, ԴԵՊՕում, տեղական ֆաբրիկայում, իսկ ձերբակալման ժամանակ ծառայում էի մեխանիկական գործարանում: Անհրաժեշտ է նշել այն հանգամանքը, որ 1912ին Շտապ-Պադրօ քաղաքում ես հանդիպել եմ Արմենակ ՊԱՐՈՆԻԿԵԱՆԻ հետ, որը հաստատեց, որ ինքը Գերմանիայում կազմակերպել է Հայաստանի օգնութեան միութիւն, եւ որ այդ միութեան մէջ մտնում են գերմանացիներ, որոնք ձգտում են ամէն կերպ օգնել Հայաստանի տարածքում ապրող հայերին: Արմենակ Պարոնիկեանն ամէն կերպ ձգտում էր ներքաշել ինձ այդ աշխատանքի մէջ՝ խոստանալով պարգեւատրել: Նա իմ ընկեր Մովսէս Խէչյաղեանին ցոյց է տուել ոսկէ դրամներ՝ խոստանալով փոխանակել նրան ոսկով: Արմենակ ՊԱՐՈՆԻԿԵԱՆԸ ձգտում էր մեզ ոսկով գնել եւ դարձնել գործիք իր զազրելի գործի համար: Ես նրան կասկածում էի որպէս մութ տարրի, որը ոսկու համար կ'անէր ամէն ինչ եւ կը գնէր ամէն ինչի: Ինձ յայտնի է, որ նա գաղտնի նամակագրութիւն ունէր գերմանական բողոքական քարոզիչների եւ ազդեցիկ տարրերի, մի առիթով նաեւ՝ պրոֆեսորների եւ այլոց հետ: Գերմանիայում նա ամուսնացել է կնոջ ֆոն-Պենցի, որը մահացաւ իմպերիալիստական պատե-

յազմի ժամանակ, դատեր հետ: Միսիոներական կազմակերպությունների հետ ես ոչ մի ընդհանուր բան չունեմ և ինձ համարում էի հայ-գրիգորյանական եկեղեցու կողմնակից:

1925թ. Լենինականում ես մտա յ առևտրականական-ցիոնիստների համայնք, քանի որ հիասթափվել էի հայ-գրիգորյանական հոգևորականության արարքներից: Ժամանակի այդ ընթացքում ես երկու անգամ նամակագրություն եմ ունեցել միսիոներական ԷՐ-ՇՈՒԽԱՐՏի կազմակերպության հետ, Ֆրանկ-Ֆորտ-աֆ-Մայնէ քաղաք: Լենինականից առաջին նամակը գրեցի 1926թ., երբ ես համագումարի էի [մասնակցում], երկրորդ նամակը գրեցի, երբ չեմ սխալվում 1927թ., որտեղ նշում էի, որ հեռացված եմ ԴԵՊՕ-ից այն բանի համար, որ մեկնել էի Լենինգրադ առևտրականների համագումարին, և խնդրում էի ինձ ուղարկել 100 ռուբլի, բայց նա հրաժարվեց ինձ դրամ ուղարկել: ԷՐ-ՇՈՒԽԱՐՏային՝ Ֆրանկ-Ֆորտ-աֆ-Մայնի համայնքի նախագահին, ես ծանոթացայ հետևեալ հանգամանքներում. 1910թ. իմ ընկեր Անդրէասը, Կոստանդնուպոլսում տեսնելով իմ ծանր դրությունը, խոստացաւ Գերմանիայում [գործող] միսիոներական կազմակերպության միջոցով ինձ դրամական օգնություն ցույց տալ, որպէսզի ես կարողանայի մեկնել Գերմանիա և կրթություն ստանայի: Ֆրանկ-Ֆորտ-աֆ-Մայնէ կազմակերպության կողմից ես ստացայ 10 ֆրանսիական ոսկի և այդ նոյն կազմակերպության ցուցումով մեկնեցի Գերմանիա: Անդ-Օդարկ տեղավայրում ամ միսիոներուհու՝ Լիզայի մոտ սովորում էի գերմաներէն լեզու: ԷՐ-ՇՈՒԽԱՐՏայի աջակցությամբ ես նշանակվեցի աշխատանքի: ԷՐ-ՇՈՒԽԱՐՏայի հետ ես անձնապէս ծանոթացայ նրա քեռակայանում, որը նա մեզ հրավիրել էր ծննդեան տօների առիթով: 1921թ. նա մեզ համոզում էր չմեկնել Ռուսաստան, պատճառաբանելով, որ քաղաքացիական պատերազմ է ընթանում: Հայաստան մեկնելուց նա ինձ ոչ մի յանձնարարություն չտուեց և ես նրան ոչինչ չխոստացայ: Նախկինում ԷՐ-ՇՈՒԽԱՐՏայի հետ ես ծանօթ չեմ եղել: Գիտէի նրան որպէս միսիոներական կազմակերպության նախագահ: Նրա մասին որևէ վատ բան ասել չեմ կարող:

1910թ., երբ ես պատրաստւում էի մեկնել Գերմանիա, ինձ մերժեցին անձնագիր տալ, քանի որ թուրքերը ուզում էին ինձ բանակ վերցնել: Ես առանց անձնագրի փախայ Բուլղարիա և թուրք հիւպատոսարանում ստացայ երթւեկ (վիզա): Բուլղարիայում մնացի ոչ աւելի քան 2 օր: 1916թ. Բեռլինում թուրքական հիւպատոսը ինձնից վերցրեց անձնագիրը, քանի որ ես հրաժարվեցի ծառայել բանակում, որի համար էլ ընդունեցի պարսկահպատակություն»:

Ռաֆայել ՄԵԼԻՔ-ԱՂԱՄՅԱՆԻ և Միհրան ԿՈՏԻԿՅԱՆԻ բոլոր ցուցմունքներից պարզ, որոշակի երևում է, որ նրանք ստացել են դրամական օժանդակություն, նամակագրություն ունէին միսիոներական կազմակերպությունների հետ և իրականացնում էին ամբողջ աշխատանքը միսիոներական կազմակերպությունների հրահանգների հիման վրայ:

Վերոշարադրեալի հիման վրայ

Ռաֆայել Կարապետի ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԸ, 56 տարեկան, ծնունդով Վ[երին] Ագուլիսի գ[իւղ], Նախ[իջեւանի] երկրամասից, բարձրագոյն հոգեւոր հաստատութիւնն աւարտած, ընտանեկան (ընտանիք ունեցող – Ք.Ա.), առեւտրական նպաստակ, չդատուած,

Միհրան Խաչատուրի ԿՈՏԻԿԵԱՆԸ, 38 տարեկան, ծնունդով Վան ք[աղաք]ից, միջնակարգ կրթութեամբ, ընտանեկան (ընտանիք ունեցող – Ք.Ա.), պարզկահպատակ, չդատուած,

մեղադրւում են այն բանում, որ, հանդիսանալով Լենինականի առեւտրական-քրիստոնէական համայնքի ղեկավար, զբաղուել են լրտեսութեամբ՝ յօգուտ ներողական երկրների, ստացել են խոշոր դրամական գումարներ արտասահմանեան միսիոներական կազմակերպութիւններից, գործունէութեան դրդում ընդարձակման եւ արտասահմանեան միսիոներական կազմակերպութիւնների աջակցութիւնների տարածման օգտին աշխատանք իրականացնելու հիման վրայ, նախատեսուած ՀՍԽՀ ՔրՕր.ի 63 յօդու[ածով], հրատարակութիւն՝ 1927 թ.:

Ներկայ գործի վերաբերեալ քննութիւնը համարել աւարտուած եւ, համաձայն ՔԴՕ 211 յօդու[ածի], յանձնել Դատախազութեան Հայկ[ական] ՊՔՎ՝ ներկայացնելու կոլեգիայի լսմանը՝ արտադատարանական կարգով:

Կազմուած՝ 25 Դեկտեմբերի 1928 թ., ք. Երեւան
3ի խմբի լիազօրուած (Պանեան)
«Համաձայն եմ» քննչական բաժնի պետ (Մադդոյեան)
«Համաձայն եմ» Հայկ[ական] ՊՔՎի փոխ-նախագահ (Պետրոսեան)

*Տեղեկանք:* Ձերբակալուածներ Ռաֆայել ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԸ եւ Միհրան ԿՈՏԻԿԵԱՆԸ պահւում են կալանքի տակ Հայկ[ական] ՊՔՎի Պարետութեան ներքոյ, 24/X ս.թ.:

Իրեղէն ապացոյցներ քննչական գործով չկան:
Քննչական բաժնի 3ի խմբի լիազօրուած (Պանեան) (թ. 3-8)

* * *

*Հարցաքննութեան արձանագրութիւն՝ 19 Մայիս, 1937* (ռուս.)

Կեղծ ցուցմունքներ տալու դէպքում դատական պատասխանատուութեան կանչւելու մէջ նախազգուշացուելով, հարցաքննուել է Միսաք Գալուստի Գալուստեանը, 1902ին, Էրզրումի վիլայէթի Թերի գիւղ, բերւապահ կր[թութեամբ], կարի ֆաբրիկայի աշխ[ատող], 1926ից կուսակցական, բնակւում է Լենինականում: 1936ի Օգոստոսին հանգստացել է Արզնիում ուսուցիչ Ռ. Մելիք-Ադամեանի հետ նոյն սենեակում:

«Առաջին օրերին ես նկատեցի, որ Մ.-Ադամեանը միշտ գիշերները քնելուց առաջ աղօթում էր եւ իրեն դրսեւորում էր որպէս բանի հաւատացեալ»: Տրոցկիստական-զինովեւական գործունէութեան մասին խօսակցութեան ժամանակ (Ռ. Մելիք-Ադամեանը – Ք.Ա.) բառացի ասել է. «Նրանք հակայեղափոխականներ չեն, նրանք ետ ունեն իրենց հայեացքները, եւ հաւր ես դա նրանց

հակայեղափոխականներ անուանում: Չէ որ Տրոցկին մի ժամանակ աւելի մեծ հեղինակութիւն ունէր, քան՝ Լենինը» (թ. 9):

* * *

*Հարցաքննութեան արձանագրութիւն՝ 27 Յուլիս, 1937, Լենինական* (շար.)

Բագրատ Սարոեւի Գէորգեան, ծնուած Կիւրակպար գիւղ (Թուրքիա), 1890, միջնակարգ կրթութեամբ, անկուսակցական, աշխատում է Լենինականում: 1936ին Լենինականի մանկավարժականում յաճախել է գերմաներէն լեզուի գիշերային դասընթացների, որ զգացել է ֆաշիստական թեքման հակայեղափոխական տրամադրութիւններ, յատկապէս կրօնական թեմաների շուրջ: Նա (Ռ. Մելիք-Ադամեանը – Ք.Ա.) ասել է. «Սովետական իշխանութիւնը կրօնը եւ հաւատացեալներին հետապնդելու իր քաղաքականութեամբ զանգուածային դժգոհութիւններ է ստեղծում երկրում եւ դրանով իսկ մեծացնում է իր թշնամիների թիւը: [Սովետական իշխանութիւնը] շուտով կը հասնի կործանման՝ փախճանի: Մարդն առանց կրօնի ապրել չի կարող, քանզի այն ունի հազարամեակների պատմութիւն եւ բոլոր ազգերը պահում են բացառապէս կրօնի փաստերի վրայ: Միեւնոյնն է, աշխարհի բոլոր յառաջդէմ մարդիկ, առաջին հերթին ֆաշիստական Գերմանիան, հանդիմանում են կրօնի դրօշակիր[ներ] եւ պիոներներ: Նրանք (գերմանացիները – Ք.Ա.) այդպէս չեն թողնի եւ թոյլ չեն տայ բոլշեւիկներին հալածել հաւատացեալներին: Շուտով վրայ կը հասնի այդ բարբարոսներից (բոլշեւիկներից – Ք.Ա.) ազատագրուելու ժամանակը»:

Մելիք-Ադամեանը սովորել է Գերմանիայում, Էջմիածնի հոգեւոր ճեմարանում, ֆաշիստաբար տրամադրուած մարդ է: (Հայերէնը հաստատում եմ)

Հետախուզութեան ընթացքում առգրաւուել է 2.400 ռուբլի, 25 դոլարի չէք, գերմաներէն թերթեր, կրօնական տարբեր գրքեր՝ 18 հատ եւ այլ փաստաթղթեր: Առգրաւուած են (թ. 11,15):

* * *

*Բանտարկեալի հարցաթերթիկ* (շար.)

Ռաֆայէլ Կարապետովիչ Մելիք-Ադամեան, 1.X.1872, ծնուած՝ Նախիջեւանի գաւառի Վերին Ագուլիս գիւղում: Ապրում է Լենինականում, ուսուցիչ (նախկին վարդապետ) Գործուածքի եւ Կարի տեխնիկումում, գիւղացի-դերձակ, ծառայող, բարձր[ագոյն] կրթ[ութեամբ], անկուս[ակցական], հայ - ՍՍՌՄ, բանակում չի ծառայել, ապստամբների եւ բանակի այլ ստորաբաժանումներում չի ծառայել, Սովետական կարգերի դէմ բանդաներում եւ խռովութիւններում չի եղել, 1928ին դաշնակցական աշխատանքի համար ենթարկուել է հետապնդումների, 3 տարով վտարուել է երկրից: Ընտանիքը՝ 5 հոգուց - կինը, 3 երեխան: Պահւում է մեկուսարանում: 9/VIII-37:

Գերմաներէնի ուսուցիչ տեքստիլ ֆաբրիկայում եւ կարի տեխնիկումում: Էջմիածնի հոգեւոր ակադեմիան աւարտել է 1894ին: 1907-1909 սովորել է Գերմանիայի Մարբուրգի եւ Հալլէի աստուածաբանական

ֆակուլտետում: 1928ին բանտարկվել է Հայկ[ական] ՊՔՎ կողմից ՌՍՖՍՌ ՔՕ 58-10 յոդվածով, դատապարտվել համակենտրոնացման ճամբար՝ 3 տարով:

*Հարցաքննութեան արձանագրութիւն՝ 28 Օգոստոս, 1937* (Սոլովկի (հաւանաբար նկատի ունի Սոլովեցկի – Ք.Ա.) համակենտրոնացման ճամբար է դատապարտուել 3 տարով) (ռուս.)

Հարց- Բացատրէք ցուցմունքը, թէ ինչ կոնկրետ հակայեղափոխական գործունէութեան համար էք դատապարտուել Սոլովկի համակենտրոնացման ճամբար 3 տարի ժամկէտով:

Պատասխան- Ես, լինելով կրօնական ոգով դաստիարակուած եւ ունենալով յատուկ բարձրագոյն հոգեւոր կրթութիւն, որպէս ակտիւ հաւատացեալ 1926ի աշնանը անցայ աւետարանական-քրիստոնեաների սեկտայի ղեկավարութեան գլուխ եւ ընդհուպ մինչեւ 1928 աւետարանականների շրջանում իրականացրել եմ հակայեղափոխական բնոյթի ակտիւ կրօնական քարոզ: Եւ դրա համար ՄՊՔՎ-ի կոլեգիայի կողմից դատապարտուել եմ Սոլովկի՝ 3 տարի ժամկէտով: Պատիժը կրելով՝ բանտ նստելու ժամկէտն աւարտելով, 2 ամիս առաջ թոյլտուութիւն ստացայ բնակուել Միութիւնում (նկատի ունի ՍՍՀՄը – Ք.Ա.)՝ բացառութեամբ 13 մայրաքաղաքային եւ կենտրոնական կէտերի:

Հ.- Քննութեամբ պարզուել է, որ աքսորից վերադառնալուց յետոյ դուք շարունակել էք վարել ակտիւ հակայեղափոխական քարոզ համայնքի հաւաքներում: Պահանջում ենք մանրամասնել անկեղծ խոստովանութեամբ:

Պ.- Իրապէս, աքսորից վերադառնալուց յետոյ ես, որպէս ջերմ հաւատացեալ, ընդհուպ մինչեւ բանտարկութիւնը, յաճախել եմ կրօնական հաւաքների, որտեղ պարզաբանել եմ «սուրբ գրքի» առանձին կէտեր:

Հ.- Ինչ է նշանակում՝ պարզաբանել էք:

Պ.- Ես պարզաբանել եմ «սուրբ գրքի» այս կամ այն տողերի իմաստը:

Հ.- Ինչ իմաստով էք դուք պարզաբանել՝ քաղաքական, թէ՞ դրական:

Պ.- Իհարկէ դրական իմաստով եմ պարզաբանել, փառաբանել եմ կրօնը:

Հ.- Քննութեանը յայտնի է, որ դուք արտասահմանի կրօնական համայնքներից ստացել էք դրամական օգնութիւն փոխանցումով եւ՝ համապատասխան ցուցմունքներ: Պահանջում ենք տալ ճշմարտացի ցուցմունք:

Պ.- Սկսած 1925ից մինչեւ 1928 ես, որպէս քարոզիչ, Գերմանիայից՝ Դրեզդէն քաղաքի մօտ գտնուող բնակավայրում բնակուող Արմենակ ՊԱՐՈՆԻԿԵԱՆԻՑ տարբեր ժամանակներում ստացել եմ փոխանցում. այդ ընթացքում ստացել եմ ընդամէնը չորս հազար երկու հարիւր դոլար: Դրա հետ մէկտեղ նրանից ստացել եմ նամակներ՝ խորհուրդներով: Դրանից յետոյ, մինչեւ օրս ես նրանից ոչ մի դրամ եւ նամակ չեմ ստացել եւ ինքս էլ չեմ գրել:

Հ.- Ում միջոցով էք դուք ստացել նամակները եւ դոլարները:

Պ.- Նամակները ես ստացել եմ փոստով, իսկ դոլարները նա ինձ ուղարկում էր «Ամերկոմ»-ի միջոցով, և դրանք ես ստացել եմ Լենինականի Ամերկոմի բաժանմունքում:

Հ.- Մանրամասնէք, թէ որտեղ և ինչ հանգամանքներում էք դուք առաջին անգամ ծանօթացել ՊԱՐՈՆԻԿԵԱՆ Արմենակի հետ:

Պ.- Արմենակ ՊԱՐՈՆԻԿԵԱՆԻ հետ ես ծանօթացել եմ 1923ին, երբ նա «ՀՕԿ»-ի Հայաստանի Օգնութեան արտասահմանեան կոմիտէի՝ արտասահմանեան ընկերութեան կողմից որպէս պատուիրակ եկել էր Գերմանիայից և Գերմանիա վերադարձին կանգ էր առել Լենինականում, որտեղ և տեսնուել է ինձ հետ:

Հ.- Ինչպէս նա ձեզ գտաւ Լենինականում:

Պ.- Նա Լենինական էր եկել Միհրան Տէր-Սարգսեանի հետ: Վերջինիս հետ ես ծանօթ եմ դեռևս 1912ից, Վան քաղաքից, որպէս քրիստոնէական միևնույն Միութեան անդամ: Եւ նրա միջոցով [Արմենակ Պարոնիկեանը] ծանօթացաւ ինձ հետ:

Հ.- Քննութեանը յայտնի է, որ Արմենակ ՊԱՐՈՆԻԿԵԱՆԻ հետ դուք կապուած էիք լրտեսական աշխատանքով, որի համար էլ նրանից ստացել էք հազար երկու հարիւր դոլար վալիւտա: Կտրականապէս պահանջում ենք տալ ազնիւ խոստովանութիւն:

Պ.- Այն մասին, որ Արմենակ Պարոնիկեանը լրտես է, ես չգիտէի և լրտեսական գործունէութեան համար ես նրանից դրամ չեմ ստացել: Իմ կողմից ՊԱՐՈՆԻԿԵԱՆԻՑ ստացուած վալիւտան՝ հազար երկու հարիւր դոլարը, ինձ ուղարկուել էր կրօնա-քարոզչական աշխատանքի համար:

Արձանագրութիւնը գրանցուած է ճիշտ իմ խօսքերով և իմ կողմից կարդացուել է - Մելիք-Աղամեան Ռ.:

Հարցաքննել եմ՝
1. IV բաժնի օպեր[ատիվ] լիազօր,
Պետ[ական] Անվտանգութեան միլ[իցիայի] լէյտենանտ    Միրզոյեան
2. III բաժնի օպեր[ատիվ] լիազօր,
Պետ[ական] Անվտանգութեան միլ[իցիայի] լէյտենանտ    Քալաշեան
Ճիշտ է: (ստորագրութիւն) (թ. 18ա-բ,19-20)

* * *

*Հարցաքննութեան արձանագրութիւն՝ 28 Յուլիս, 1937* (Ձերբակալուած Մելիք-Աղամեան Ռաֆայէլ Կարապետի) (շար.)

Հ.- Քննութիւնը տուեալներ ունի, որ ձերբակալուած ՊԱՊԻԿԵԱՆ Մկրտիչը, Օգոստոսի 8ից մինչև Օգոստոսի 18ը Ձեզ հետ միասին գտնուելով մի խցիկում, Ձեր ներկայութեամբ զրոյցում արել է հակայեղափոխական յայտարարութիւններ: Պահանջում ենք տալ ըստ էութեան անկեղծ խոստովանութիւն:

Պ.- Ես հիմա չեմ կարող յիշել նրա՝ ՊԱՊԻԿԵԱՆ Մկրտիչի, հակայեղափոխական երոյթները առանձնական իշխանութեան դէմ: Յիշում եմ միայն, որ նա պատմել է ինձ իր գործի մասին. հաղորդել է, որ իրեն մեղադրում են այն բանում, որ դաշնակ է, բռնել է բանտարկութիւնից փախած տեռորիստ Բուլղարեցի Ծաղուրեանին եւ դժգոհութիւն է յայտնել խցիկի կեանքի պայմաններից: Վերջինիս մասին, այսինքն՝ դժգոհութիւն խցի կեանքից, արտայայտել եմ նաեւ ես՝ Մ.-Աղամեանս:
Հ.- Ինչու դուք յիշում էք Մկր[տիչ] ՊԱՊԻԿԵԱՆԻՆ վերաբերող ամբողջ զրոյցը իր մեղադրանքի մասով, իսկ նրա հակայեղափոխական յայտարարութիւնները առակարգերի հասցէին չէք յիշում: Քննութիւնը պահանջում է երկերեսանութիւն չանել եւ տալ ազնիւ ցուցմունքներ:
Պ.- Չեմ կարող յիշել եւ դրա համար էլ չեմ կարող ցուցմունք տալ:
Հ.- Քննութիւնն արձանագրում է, որ դուք թաքցնում էք ՊԱՊԻԿԵԱՆ Մկրտիչի հակայեղափոխական յայտարարութիւնները, քանի որ իրենք նոյնպէս համերաշխ էք նրա հետ. ի՞նչ կ'ասէք:
Պ.- Ես չեմ կարող այդ հարցին պատասխանել եւ ես նրա՝ ՊԱՊԻԿԵԱՆԻ հետ համերաշխ չեմ:

Արձանագրութիւնը գրանցուած է իմ խօսքերով, ճիշտ է գրանցուած եւ իմ կողմից կարդացուել է - Ռաֆայէլ Մելիք-Աղամեան:

Հարցաքննել եմ՝
1. IV բաժնի օպեր[ատիւ] լիազօր,
Պետ[ական] Անվտանգութեան մի[լիցիայի] լէյտենանտ Միրզոյեան
2. III բաժնի օպեր[ատիւ] լիազօր,
Պետ[ական] Անվտանգութեան մի[լիցիայի] լէյտենանտ Քալաչեան
Ճիշտ է: (ստորագրութիւն) (թ. 24)

* * *

*Հարցաքննութեան շարունակութիւն՝ 7 Սեպտեմբեր, 1937, Լենինական ք.* (Մեղադրեալ Մելիք-Աղամեան Ռաֆայէլ Կարապետովիչի) (շար.)
Հ.- Քննութեամբ պարզուել է, որ Դուք արտաքից վերադառնալուց յետոյ էլ, այսինքն 1931ի վերջից մինչեւ ձերբակալման օրը վարել էք հակայեղափոխական բնոյթի ակտիւ կրօնական պրոպագանդա: Պահանջում ենք անկեղծ խոստովանել:
Պ.- Իրապէս, ընդհուպ մինչեւ 1937 ես յաճախել եմ աւետարանականների համայնքի ժողովներին: Հաւաքներին «սուրբ գրուածքի» առանձին տողերի բացատրութիւնների վերաբերեալ վարել եմ հակայեղափոխական բնոյթի ակտիւ կրօնական պրոպագանդա: Դրանով ես ինձ ճանաչում եմ մեղաւոր եւ խոստանում եմ յետագայում հրաժարուել այդ հակայեղափոխական գործունէութիւնից:

Արձանագրութիւնը ինձ կարդացուել է, կազմուած է ճիշտ իմ խօսքերով, որի համար եւ ստորագրում եմ - Ռ. Մ.-Ադամեան:

Ներկայ էր՝
V բաժնի օպեր[ատիւ] լիազօր (Շիգին)
Հարցաքննեց՝
III բաժնի օպեր[ատիւ] լիազօր,
Պետ[ական] Անվտանգ[ութեան] միլից[իայի] լէյտենանտ (Քալաշեան)

Ճիշտ է: (ստորագրութիւն) (p. 26)

* * *

*Հարցաքննութեան յարատեւութիւնը՝ 7 Սեպտեմբերի, 1937, Լենինական ք.* (մեղադրեալ Մելիք-Ադամեան Ռաֆայէլ Կարապետովիչի) (ռուս.)

Հ.- Քննութեամբ պարզուել է, որ Դուք ընդհուպ մինչեւ ձեր ձերբակալութիւնը վարել էք հակայեղափոխական ագիտացիա՝ սադրանքի ենթարկելով կոլտնտեսութեան եւ սովխոզ[անութեան] միջոցառումները, գովաբանելով ֆաշիստներին, ֆաշիստական Գերմանիան եւ արդարացնելով ազգի մերկացուած թշնամիներին, տրոցկիստական, զինովեւական, ֆաշիստական լրտեսներին, տեռորիստներին եւ վնասարարներին: Միաժամանակ դուք գովաբանել էք ժողովրդի թշնամի, ֆաշիստ Տրոցկուն: Քննութիւնը պահանջում է երկերեսանութիւն չանել եւ պարզաբանել:

Գ.- Ես նման հակայեղափոխական ագիտացիա չեմ վարել: Թող վկաները հաստատեն դա իմ երեսին:

Ռ.Մ.-ԱԴԱՄԵԱՆ

Մեղադրեալ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԻՆ յայտարարւում է, որ իրեն կ'առերեսեն վկայ ԳԱԼՈՅԵԱՆ Միսաքի հետ (p. 27):

* * *

*Առերեսման արձանագրութիւն* (մեղադրեալ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ Ռաֆայէլի եւ ԳԱԼՈՅԵԱՆ Միսաքի միջեւ) (ռուս.)

Հ.- Վկայ ԳԱԼՈՅԵԱՆ Միսաքին.
Հաստատու՞մ էք ձեր ցուցմունքներն այն մասին, որ մեղադր[եալ] ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ Ռաֆայէլը Ձեզ հետ զրոյցի ժամանակ պաշտպանել է մերկացուած եւ բռնադատուած անդամների հակայեղափոխական, տրոցկիստազինովեւական կենտրոնի եւ ազգի թշնամի ֆաշիստական լրտես Տրոցկու գործունէութիւնը: Եթէ հաստատում էք դա, կրկնէք ձեր ցուցմունքը տուեալ առերեսմանը՝ ի դէմս մեղադրեալ Մ.-Ադամեանի:

Գ.- Վկայ ԳԱԼՈՅԵԱՆ Միսաք.
1937 Ապրիլի 19ի իմ ցուցմունքները ես լրիւին հաստատում եմ եւ, ի դէմս մեղադրեալ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԻ, տուեալ առերեսմանը կրկնում եմ հետեւեալը. 1936ի Օգոստոսին ես եւ մեղադրեալ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ Ռաֆայէլը միասին գտնուել ենք Արզնիում սանհանգստի բուժման մէջ եւ ապրել ենք մէկ սենեակում: 1936 Օգոստոսի 21ին, կապուած միացեալ հակայեղափոխական, տրոցկիստական-զինովեւական կենտրոնի նկատմամբ

դատավարութեան ժամին մամուլում հրապարակուածի հետ, իմ եւ Մ.-Ա-ԴԱՄԵԱՆԻ միջեւ այդ թեմայի շուրջ ծագել է խօսակցութիւն, որի ընթացքում ես ասացի, որ խիստ բորբոքուած եմ եւ բորբոքւեցի այդ հակայեղափոխական ֆաշիստների արարքներով, որոնք ահաբեկչութիւն էին նախապատրաստել ժողովրդի առաջնորդի եւ երկրի ղեկավարների նկատմամբ: Իմ յայտարարութեանը Մ.-ԱԴԱՄԵԱՆԸ առարկեց եւ բառացի արտայայտուեց. «Նրանք հակայեղափոխականներ չեն, քանի որ նրանք եւս ունեն իրենց հայեացքները, եւ դու իզուր ես նրանց մեղադրում որպէս հակայեղափոխականների: Քանի որ Տրոցկին մի ժամանակ աւելի մեծ հեղինակութիւն ունէր, քան թէ Լենինը»: Այդ խօսակցութեան ընթացքում ես սկսեցի նրան բացատրել, որ ինքը ճիշտ չէ, որին ՄԵԼԻՔ-ԱԴԱՄ-ԵԱՆԸ ոչինչ չպատասխանեց եւ լռեց:

Հ.- մեղադրեալ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ Ռաֆայէլ Կարապետովիչին.
Քննութիւնը ծեզնից կտրականապէս պահանջում է լուռ էութեան պաշտպանող եւ արդարացնող ցուցմունքներ տալ ժողովրդի թշնամիի հակայեղափոխական, ֆաշիստական գործունէութեան վերաբերեալ:

Պ.- մեղադրեալ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ Ռաֆայէլ Կարապետի.
ԳԱԼՈՅԵԱՆ Միսաքի ցուցմունքները հաստատում եմ, որ 1936 Օգոստոս ամսին մեր միջեւ խօսակցութիւն է տեղի ունեցել տրոցկիստա-զինովեւական հակայեղափոխական կենտրոնի դատավարութեան մասին մամուլում տեղ գտած հրապարակման կապակցութեամբ: Ես չեմ յիշում՝ պաշտպանել եմ ես նրանց հակայեղափոխական գործունէութիւնը, թէ՝ ոչ: Բայց քանի որ վկայ ԳԱԼՈՅԵԱՆԸ հաստատում է, որ ես արդարացրել եմ տրոցկիստա-զինովեւական կենտրոնի հակայեղափոխական գործունէութիւնը, նրա ցուցմունքները չեմ ժխտում: Վկայ ԳԱԼՈՅԵԱՆ Միսաքի հետ ոչ մի թշնամութիւն կամ անձնական հաշիւներ չունեմ, եւ նա չէր զրպարտի իմ հասցէին: Յայտարարում եմ, որ ես մեղաւոր եմ՝ պաշտպանելով հակայեղափոխականներին եւ զովերգելով Տրոցկուն:
Ինձ մեղաւոր եմ ճանաչում այդ բանում, ես սխալուել եմ եւ խնդրում եմ քննութեանը հաշուի առնել այդ հանգամանքը իմ հարցի քննարկման ժամանակ:

Ռաֆայէլ Մելիք-ԱԴԱՄԵԱՆ

Առերեսման արձանագրութիւնը մեզ կարդացուել է, կազմուել է ճիշտ՝ մեր խօսքերից, ինչի համար եւ ստորագրում ենք.

1. Ռաֆայէլ Մելիք-ԱԴԱՄԵԱՆ
2. ԳԱԼՈՅԵԱՆ

Առերեսումն իրականացրել է՝
Լենքաղի ՆԳԺԿ III բաժնի օպեր[ատիւ] լիազօր, Պետ[ական] Անվտանգութեան մի[լիցիայի] լէյտենանտ (Քալաշեան)
Ճիշտ է: (ստորագրութիւն) (p. 28-29)

* * *

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ» (ստոր.)
ԽՄԲԻ ՊԵՏ, ԼԵՆՔԱՂԲԱԺՆԻ ՆԳԺԿ-Ի ՊԵՏ
ՊԵՏ[ԱԿԱՆ] ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԱՒԱԳ ԼԷՅՏԵՆԱՆՏ
ԲԱՐԱՅԵԱՆ

28 Սեպտեմբեր, 1937

ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ Ռաֆայէլ Կարապետովիչի
թիւ 19375 Քննչական գործով
մեղադրանքի մասին

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ես, Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿի Լենքաղբաժնի III բաժնի օպեր[ատիւ] լիազօր, Պետ[ական] Անվտանգութեան կրտսեր լէյտենանտ ՔԱԼԱՇԵԱՆ Վ., 1937 Սեպտեմբերի 9ին քննելով թիւ 19375 Քննչական գործը ակտիւ նկերեցական միջոցներ, արդյունքում ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ Ռաֆայէլ Կարապետովիչի մեղադրանքի առիթով (ծնուած 1872 թ., ծագումով Նախիջեւանի ԱՍՍՌ Վեր[ին] Ագուլիս գիւղից, հայ, ՍՍՌՄ քաղաքացի, բարձրագոյն կրթութեամբ, քրիստոնեաների համայնքի քարոզիչ, 1928ին լրտեսութեան մեղադրանքով 3 տարով համակենտրոնացման ճամբար դատապարտուած, մինչեւ բանտարկութիւնը Լենինական քաղաքում բնակւող), հաստատել եմ հետեւեալը.

ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ Ռաֆայէլը ունեցել է հին կապեր Գերմանիայում, որտեղ սովորել է 1907ից մինչեւ 1909 թ. աստուածաբանական ֆակուլտետում, Գերմանիայի աւետարանական-քրիստոնեաների համայնքի ղեկավար. գերմանական գործակալ Արմենակ Պարոնիկեանի առաջարկով, 1924ից կանգնելով Լենինականի աւետարանական-քրիստոնեաների համայնքի գլուխ, իրականացրել է ակտիւ քարոզչական հակայեղափոխական աշխատանք: Մինչեւ 1928 թ. ձերբակալ[ուելը] ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԸ իր քարոզչական հակայեղափոխական գործունէութեան համար պարբերաբար Գերմանիայից՝ Պարոնիկեանից, ինչպէս նաեւ Ամերիկայից՝ ոմն Արշակիր Աւետիսեանից ստացել է մեծ գումարի վարկեր դոլարով:

Դրա հետ միասին նա Պարոնիկեանից ստացել է համայնքի աշխատանքի, երիտասարդների նոր խմբակների կազմակերպման եւ այլնի վերաբերեալ ցուցմունքներ եւ վերջնական պահանջով պարբերաբար տեղեկացրել է նրան իրականացուած աշխատանքի մասին: Այսպիսով, ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԸ ծաւալել է մեծ աշխատանք ՍՍՌՄ տարածքում արտասահմանեան միսիոներական կազմակերպութիւնների ազդեցութեան օղակների ընդլայնման նպատակով, որոնք, ինչպէս հաստատուել է, ծառայում են որպէս լրտեսա-հետախուզական ծածկոցներ: 1928ի վերջին ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ Ռաֆայէլը լրտեսութեան մեղադրանքով 3 տարով դատապարտուել է համակենտրոնացման ճամբար: Աքսորի ժամկէտը լրանալով՝ ազատուել է Սոլովկիի ճամբարից միայն 13 օր շուտ: 1931ին, վերադառնալով Լենինական, ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԸ շարունակել է ղեկավար դեր կատարել Լենինականի աւետարանական-

քրիստոնեաների համայնքում և ընդհուպ մինչև 1937 վարել է հակահեղափոխական բնույթի ակտիվ կրոնական պրոպագանդա: Միաժամանակ, ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆԸ, ընդհուպ մինչև իր բանտարկության օրը վարել է ակտիվ ֆաշիստական ագիտացիա՝ փառաբանելով ֆաշիստական Գերմանիան որպես կրոնի «պաշտպանողի» և պնդելով, որ կոչված էր հաստատելու-ճնշվածներին ազատագրել բարբարոս բոլշևիկներից»: Արդարացրել և պաշտպանել է ազգի մերկացրած թշնամիներ՝ ֆաշիստական լրտեսներ Զինովևին, Կամենևին և այլոց, հայտարարելով, որ «նրանք չեն եղել հակա-հեղափոխականներ, ունեցել են իրենց գաղափարները, իսկ Տրոցկին մի ժամանակ եղել է ավելի հեղինակավոր, քան Լենինը»:

Հակահեղափոխական, ֆաշիստական գործունեությունը հաստատվում է հենց մեղադրյալ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆԻ ցուցմունքներով, երկու վկաների ցուցմունքներով և առերեսմամբ:

ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆԸ իրեն մեղավոր է ճանաչել՝ լրիվին մերժելով լրտեսական գործունեությունը:

*ՈՐՈՇԵՑԻ.*

Քնն[ական] գործը ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ Ռաֆայել Կարապետովիչի մեղադրանքի գծով ուղարկել Հայկ[ական] ՍՍՌի ՆԳԺԿի եռյակի քննարկմանը:

*ՏԵՂԵԿԱՆՔ:*

1. Ձերբակալված ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ Ռաֆայել Կարապետովիչը պահվում է կալանքի տակ Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿի Լենինականի ներքին բանտում 1937 թ. Օգոստոսի 8ից:
2. ԺԳ թիվ 227092 սերիայի Անձնագիրը քնն[ական] գործի հետ է:

III բաժնի օպեր[ատիվ] լիազոր,
Պետ[ական] Անվտանգության միլ[իցիայի] լեյտ[ենանտ] (Քալաչյան) (թ. 33-34)

* * *

Քաղվածք թիվ 13 արձանագրությունից (շար.)
Հայկական ՍՍՌ ՆԳԺԿի եռյակի նիստից, 3 Հոկտեմբեր, 1937

*Լսեցին.*

44. Հայկ[ական] ՍՍՌ Լենքաղ. բաժնի ՆԳԺԿի թիվ 19375 գործը ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ Ռաֆայել Կարապետովիչի մեղադրանքի վերաբերյալ, ծնված 1872, Լենինական քաղաքի բնակիչ, նախկին փաստաբան:

Մեղադրվում է այն բանում, որ 1924ից Գերմանիայի ավետարանական-քրիստոնեաների համայնքի ղեկավարի առաջարկով կանգնել է ավետարանական համայնքի գլուխ և իրականացրել է ակտիվ քարոզչական-հակահեղափոխական աշխատանք, որի համար Գերմանիայից վարձատու է ստացել: 1928ին լրտեսության մեղադրանքով ձերբակալվել և դատապարտվել է հա-

ժանկնողացման ծախքար: Այսուհետ վերադառնալուց յետոյ շարունակել է իրականացնել հ.-ս. աշխատանքը:

*__Որոշեցին.__*

ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ Ռաֆայել Կարապետովիչին՝ ԳՆԴԱԿԱՀԱՐԵԼ, նրան վերաբերող անձնական իրերը բռնագրավել:

Ճիշտ է:
Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ-ի Եռեակի քարտուղար՝ Գրիգորեան
(ստորագրութիւն)

Եռեակի որոշումն իրագործուել է 8.X.1937 թ., գիշերը ժամը 2ին (թ. 35-36):

* * *

1956 Նոյեմբերի 25ին կինը՝ Արփենիկ Մելիք-Ադամեանը, դիմում է գրել Անդրկովկասի զինուորական դատախազին՝ խնդրելով քննել ամուսնու գործը եւ, եթէ անմեղ է, ազատել, քանի որ 19 տարի է անցել, եւ ինքը լուր չունի:

1957 Հոկտեմբերի 4ին տրուած տեղեկանքում նշւում է, որ 1937 թ. Հոկտեմբերի 3ին Ռաֆայել Մելիք-Ադամեանը դատապարտուել է 13 տարուայ ազատազրկման:

1957 Հոկտեմբերի 29ին նրա արխիւային գործը տրուել է վերանայման:

1957 Նոյեմբերի 13/14ին քննուել է նրա յանցանքը, հարցաքննութիւն է անցկացուել, գործը վերանայուել է եւ արդարացուել: Հայկ[ական] ՍՍՌ Ան-վ[տանգութեան] կոմիտէի արխիւային բաժնում պարզել են, որ յատուկ չի հաշուառուել եւ 1928ին բանտարկուած եւ դատապարտուած չի եղել (թ. 38-40,43): (ռուս.)

* * *

Հայկ[ական] ՍՍՌ Պետ[ական] անվտանգութեան մարմիններում քննչական խախտութեան գծով դատախազի օգնական Վ. Սարգսեանի ստորագրութեամբ 1957ի Նոյեմբերի 25ին Երեւանում Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ տեղեկանք է տրուել այն մասին, որ 1940 Մարտի 13ին Զինուորական տրիբունալի կողմից 10 տարուայ ՈՒԱՃ ազատազրկման դատապարտուած Յովհաննէս Մարտիրոսովիչ Բաղալեանը «ծանուցել է մեզ այն բանում, որ, հանդիսանալով Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ-ի Լենինականի քաղաքային բաժնի գաղտնի աշխատակից, «Միցոմեան» մականուան ներքոյ, 1937ի վերջից անցել է սադրանքի եւ զրպարտութեան, օրգաններին ապատեղեկատուութեան ներարկել, իր իսկ կողմից յօրինուած տուեալների հիման վրայ մի շարք մարդկանց զրպարտել, հարցաքննութիւնների ժամանակ սադրիչ-զրպարտչական ցուցմունքներ տուել շատ մարդկանց նկատմամբ, նոյնիսկ այնպիսիների, որոնց ինքն անձամբ չի ճանաչել» (թ. 48): (ռուս.)

* * *

Մէկ այդ տեղեկանքում Զինուորական տրիբունալի կողմից 1940ի Ապրիլ 21-23 դատապարտուել են Հայկ[ական] ՍՍՌ Լենինականի ՆԳԺԿ-ի քաղ[աքական] բաժնի նախկին պետ Ագուլեան Արտակը, այդ բաժնի օպերատիւ լի-

ազգի Սերգեյ Սարուխանովը և Դմիտրի Շիգլևը, անհիմն ձերբակալություններ, քննչական փաստաթղթերը կեղծելու, սադրանք և զրպարտանք, բանտարկյալի նկատմամբ ֆիզիկական ճնշում կիրառելու, կեղծ «ցուցմունքներ» տալու համար «...ինչպես իրենց, այնպես էլ այլ մարդու և անմեղ սովետական քաղաքացիների նկատմամբ...»: Այդ նպատակով ինքնագլուխ ստեղծել են հարցաքննությունների արձանագրություններ, հարկադրել ձերբակալվածներին ստորագրել, իրենք կազմել են փորձագիտական հանձնաժողովի կեղծ «եզրակացությունները» և հանձնաժողովին առնչել բացառապես ոչ իրավասու, բժշկական տարրերի՝ ստիպելով ստորագրել հանձնաժողովի որոշումները (р. 49): (ռուս.)

* * *

Լենքաղսովետի գործկոմի նախագահի տեղակալը, որն աշխատել է որպես Լենինականում լույս տեսնող «Մանածագործ» թերթի խմբագիր, 1957 թ. վկայել է, որ տպարանի սրբագրիչ Ռաֆայել Մելիք-Աղամյանը թերթը լավ էր սրբագրում: «Իբրև սրբագրիչ նա ոչ մի սխալ կամ վրիպում թույլ չտվեց թերթում», - 13.XI. 1957 թ. տեղեկանքում գրել է Աբրահամյան Մնացականը (р. 51): (հայ.)

* * *

1957 Նոյեմբերի 18ին հարցաքննվել է Ակնոնիկյան Վահագ Արշալույսովիչը, որը Մելիք-Աղամյանի աշակերտն է եղել: «...Լավ հիշում եմ, որ երբ ես 1935/36 ուսումնական տարում 9րդ դասարանի աշակերտ էի, մենք անցնում էինք ռուսաց՝ գրականություն լեզու, որը մեզ դասավանդում էր Մելիք-Աղամյան Ռաֆայելը: Նրան գիտեմ միայն սակ մեկ ուսումնական տարվա ընթացքում: Նրա մասին հիշեցնելը կարող եմ ասել, որ նա իր առարկայի գիտակ էր, արդար ու պահանջկոտ ուսուցիչ էր: Մելիք-Աղամյանից առաջ 8րդ դասարանում գրականություն լեզուն դասավանդել է ոմն Միրաքյան Թովմասյանը, բայց դասի ժամանակ ինչ ասես չէր լինում՝ և աղմուկ, և խառնակչություն, իսկ Մելիք-Աղամյանի դասին՝ լուռ էինք, և եթե ես ինչ որ բան գիտեմ, հասկանում եմ գրականություն լեզվից, դա շնորհիվ ուսուցիչ Մելիք-Աղամյանի է: Մենք՝ աշակերտներս, յարգում էինք նրան. ուսուցչական կազմի շրջանում ևս վայելում էր յարգանք և հեղինակություն...» (р. 55р): (ռուս.)

* * *

Լենինական քաղաքի բնակիչ Մարգարյան Մովսեսը (Երևանի Մանկավարժական ինստիտուտի Լենինականի մասնաճյուղի տնօրենն էր, որ և Մելիք-Աղամյանը դասավանդում էր գերմաներեն) 1957 Նոյեմբերի 18ին ցուցմունք է տվել. «Մեր համատեղ աշխատանքի ընթացքում նրան կարող եմ բնութագրել միայն դրական: Որպես մասնագետ նա կատարելագործվում էր տիրապետում լեզուն և դրական ու լավ դասավանդում ուսանողներին: ...Ուսանողների և դասավանդող անձնակազմի կողմից ոչ մի բողոք Մելիք-Աղամյանի նկատմամբ չի եղել: Անձամբ ինձ, Մելիք-Աղամյանից կամ ուսանողական և դասախոսական կազմի կողմից տեղեկություն իր ներքին դրության, սովետական պետության մասին հակասովետական բնույթի և որևէ արտահայ-

տարիներ չի եղել: Եթէ նմանատիպ խոստովանութիւններ տեղ գտնէին, ապա ես տեղեակ կը լինէի եւ ժամանակին տեղեակ կը պահէի համապատասխան մարմիններին...» (թ. 56բ,57): (ռուս.)

* * *

Գագիկ Գրիգորեանը, որը Մելիք-Ադամեանի հետ աշխատել է Լենինականի տեքստիլ բանֆակում, 1957 Նոյեմբերի 19ին վերոյիշեալի նման ցուցմունք է տուել՝ աւելացնելով. «...Նոյնպէս չեն եղել դէպքեր, որ նա իր ներկայութեամբ դրական արտայայտուէր մեր կուսակցութեան թշնամիների՝ Տրոցկու եւ Զինովեւի մասին» (թ. 58բ): (ռուս.)

* * *

Շահրիմանեան Յակոբը, որը Մելիք-Ադամեանի հետ աշխատել է Լենինականի տեքստիլ բանֆակում, 1957 Նոյեմբերի 20ին ցուցմունք է տուել, որ՝ «...բաւական կրթուած, քաղաքավար, կոռեկտ եւ ճշտապահ անձնաւորութիւն էր: ...Ակտիւ մասնակից է բոլոր դասընթացներին եւ ժողովներին, գործուն մասնակցութիւն է ունեցել Մանկավարժական ինստիտուտի աշխատանքին: ...Մելիք-Ադամեանը ակտիւ մասնակից է եղել քաղպարապմունքներին. բնութագրական է նշել, որ նա ակտիւ մասնակցութիւն էր ունենում, երբ խօսքը գնում էր դիալեկտիկական մատերիալիզմի մասին, քանի որ այն տիրապետում էր կատարեալ...»: Տեխնիկումից հեռացաւ, քանի որ Բաղդասեան Յովհաննէսի հետ լեզու չգտաւ, աշխատեց *Բանւոր* թերթի խմբագրութիւնում որպէս թարգմանիչ, սրբագրիչ: Բաղդասեանը բոլորին զրպարտել է, նոյնիսկ իր հարազատներին (թ. 60բ,61ա): (ռուս.)

* * *

Սաֆեան Արտակը 1957 Նոյեմբերի 23ին ցուցմունք է տուել, որ տեքստիլ բանֆակի տնօրէնը վատ մարդ էր, իսկ Ռ. Մելիք-Ադամեանը ծնունդով Ղարաբաղից էր (թ. 62բ-63ա): (ռուս.)

* * *

7/ ու. - 2782 (ռուս.)
2/XII-1957

Գաղտնի օրինակ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԷԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Հսկողական բողոքի կարգով
Մելիք-Ադամեան Ռաֆայէլ Կարապետովիչի գործով

Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿին կից նախկին եռեակի որոշմամբ
1937 թ. Հոկտեմբերի 3ին
դատապարտուել էր ՊԱՇ՝ գնդակահարութեան

ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ Ռաֆայէլ Կարապետովիչը,
ծնուած 1872 թ., Նախիջեւանի ԱՍՍՌ Վ[երին] Ագուլիս գիւղի ծնունդ,
Լենինական քաղաքի բնակիչ, բարձրագոյն կրթութեամբ,

հայ եկեղեցու նախկին վարդապետ,
մինչեւ բանտարկուելը գերմաներէն լեզուի դասատու

ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԻ ձերբակալման համար հիմք հանդիսացան 1937 թ. օպերատիւ նիւթերը՝ 1928 թ. մեղադրական եզրակացութեան պատճէնը եւ վկաներ Գալոյեան Մ. Գ., Գէորգեան Բ. Ս. եւ Բաղալեան Յ. Մ.ի ցուցմունքները:

ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԸ մեղադրանք ճանաչել եւ դատապարտուել է այն կասկածութեամբ, որ 1924ից Գերմանիայի առեւտրաարդիւնաբերական-բրիտանականների ղեկավարի առաջարկով կանգնած է եղել առեւտրաարդիւնաբերական համայնքի գլուխ եւ վարել է ակտիւ քարոզչական, հ/յ գործունէութիւն, որի համար Գերմանիայից ստացել էր վարձատու: 1928 թ. լրտեսութեան մեղադրանքով ձերբակալուել եւ դատապարտուել է: Աքսորից վերադառնալուց յետոյ շարունակել է վարել հ/ս աշխատանք:

Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿին կից նախկին եռեակի 1937 թ. հոկտեմբերի 3ի որոշումը չի կարող թողնուել ուժի մէջ եւ ենթակայ է չեղեալ յայտարարուելու հետեւեալ հիմնաւորմամբ.

Նախնական քննութեան ընթացքում թոյլ են տրուել ՔԴՕ կոպիտ խախտումներ, ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԻ ձերբակալութիւնը վաւերացուած չի եղել, մեղադրանքը չի ներկայացուել, 198 յօդուածը ի կատար չի ածուել:

Թէեւ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԸ նախնական քննութեան ընթացքում տուել է ճանաչողական ցուցմունքներ, սակայն նրա ցուցմունքները վստահութիւն չեն ներշնչում, քանի որ քննութեանը մասնակցել են Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿի Լենինականի Բաժնի աշխատակիցները՝ պետանվտանգութեան մլադշի լէյտենանտ Ս. Սարուխանեանը, Շիգլինը, մեղադրական եզրակացութիւնը հաստատուել է ՆԳԺԿի Լենինականի նախկին պետական օգնական, պետանվտանգութեան աւագ լէյտենանտ Բաբայեան Խաչատուր Եակովլեւիչը, որոնք մի շարք քննչական գործերի կեղծման համար իրենք են դատապարտուել:

Հ/ս աշխատանք տանելու համար Մելիք-Ադամեանին մեղադրելով վկայ Բաղալեան Յովհաննէս Մարտիրոսովիչի ցուցմունքները կոնկրետ չեն, վստահութիւն չեն ներշնչում, քանի որ ինքը 1940 թ. Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿի Ռազմական տրիբունալի կողմից դատապարտուել է օրգաններին ապատեղեկացնելու, զրպարտութեան եւ սադրանքի համար:

1928ին ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԻՆ ներկայացուած լրտեսութեան մէջ մեղադրանքը չի հաստատուել: Չի գրանցուել որպէս գերմանական հետախուզութեան լրտես, ըստ Հայկ[ական] ՍՍՌ ՆԳՄ ճիւղերի, ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԸ նոյնպէս չի գրանցուել:

Լրացուցիչ ստուգման ընթացքում վկայ Գալոյեան Մ. Գ. վերաքննուել է, ինչը եւ հաստատել է նրա ցուցմունքները, բայց այդ ցուցմունքներից չի ենթադրւում հ/յ մտադրութիւն:

ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԸ նրան արտայայտել է իր անձնական կարծիքը Տրոցկու հեղինակութեան մասին, բայց ոչ թէ ագիտացիայի նպատակով եւ կողմնակի անձանց բացակայութեան պայմաններում: Մելիք-Ադամեանի արտայայտութիւնները չեն համապատասխանում հ/յ յանցագործութիւն հասկացութեանը:

Հարցաքննուած վկաները (ԱՒԵՏԻՍԵԱՆ Վ. Ա., ՄԱՐԳԱՐԵԱՆ Մ. Մ., ԳՐԻԳՈՐԵԱՆ Գ. Ա. եւ այլոք), որոնք գիտէին ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԻՆ աշխատանքային վայրից, ցուցմունք տուեցին, որ նա հակայեղափոխական գործունէութեամբ չի զբաղուել եւ բնութագրեցին նրան որպէս բարեխիղճ եւ լաւ աշխատող:

Վերահարցաքննել վկայ ԳԷՈՐԳԵԱՆ Բ.ին հնարաւորութիւն չստեղծուեց՝ կապուած Հայկական ՍՍՌի տարածքում նրա չգտնուելու հետ:

Ներկայ ստուգմամբ յայտնաբերուած գործի նիւթերի եւ տուեալների քննութիւնը ցոյց է տուել, որ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԸ 1937ին ձերբակալուել ու դատապարտուել է անհիմն:

Շարադրուածի հիման վրայ, եւ, առաջնորդուելով ՍՍՌՄ դատախազական հսկողութեան կանոնակարգով,

<u>ԽՆԴՐՈՒՄ ԵՄ</u>

Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ նախկին եռեակի 1937 թ. Հոկտեմբերի 3ի որոշումը ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ Ռաֆայէլ Կարապետովիչի նկատմամբ չեղեալ յայտարարել եւ, իր արարքում յանցակազմի բացակայութեան պատճառով, նրա գործը յետագայ վարոյթից կարճել:

<u>Յաւելուած:</u> Արխիւա-քննչական թիւ 8734/57/19375 գործը ստուգման նիւթերով ընդգրկուած է մէկ հատորի մէջ, ընդհանուր 63 թերթով:

Հայկական ՍՍՌ Դատախազի տեղակալ
Արդարադատութեան աւագ խորհրդական (ՂՈՒԿԱՍԵԱՆ Յ. Ս.)

<u>*ՏԵՂԵԿԱՆՔ:*</u> Գործը վերանայուել է կալանուած դատապարտեալի կնոջ՝ քաղաքացուհի ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ Արփենիկ Յովհաննէսովնայի, յայտարարութեան, բնակւող Երեւան ք[աղաք]ում, Աբովեանի 181 փող[ոցի] վրայ (թ. 64-65): (ռուս.)

* * *

Տրուած է Հայկ[ական] ՍՍՌ Գերագոյն դատարանի քրէական գործերի կոլեգիայի որոշումը.

թիւ 5/445 «...Համաձայնել ՀՍՍՌ դատախազի տեղակալի բողոքի հետ, ՀՍՍՌ ՆԳԺԿի եռեակի 3/10-1937 թ. մեղադրական որոշումը ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ ՌԱՖԱՅԷԼ ԿԱՐԱՊԵՏՈՎԻՉԻ նկատմամբ ԲԵԿԱՆԵԼ, եւ գործը կարճել յանցակազմի բացակայութեան պատճառով»:

Նախագահ՝ Լ. Առաքելեան
Անդամներ՝ Խանամիրեան, Խուրշուդեան (թ. 68) (ռուս.)

* * *

12/12-1957 ԳԱՂՏՆԻ (հայ.)

ՈՐՈՇՈՒՄ թիվ 5/445

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ

Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան 12/12-1957 թ., հետևյալ կազմով՝

Նախագահ՝ Լ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Անդամներ՝ ԽԱՆԱՄԻՐՅԱՆ, ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ
Դատախազ՝ ՂԱՄԲԱՐՅԱՆ

դատական նիստում քննեց Գերագույն դատարանի անդամ՝ Ա. Խուրշուդյանի զեկուցմամբ ՀՍՍՌ դատախազի տեղակալի բողոքը:

Հայկական ՍՍՌ Ներքին գործոց ժողովրդական կոմիսարիատի 1937 թ. հոկտեմբերի 3ի որոշմամբ [Ռ. Մելիք-Ադամյանը] դատապարտվել է պատժի առավելագույն չափի՝ ԳՆԴԱԿԱՀԱՐՈՒԹՅԱՆ:

ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ ԿԱՐԱՊԵՏՈՎԻՉ, ծնվել է 1872 թ., Նախ[իջևանի] ԱՍՍՌ Վ[եդիի] Ագուլիս գյուղում, Լենինական քաղաքի բնակիչ, բարձրագույն կրթությամբ, նախկին հոգևորական վարդապետ, մինչև կալանավորվելը՝ եկեղեցական լեզվի դասատու:

Մելիք-Ադամյանը մեղադրվել է նրանում, որ 1924 թ. գերմանական կառուցիկ (իմա՝ ավետարանական – Ք.Ա.) խորհրդում հավատացյալների համայնքի ղեկավարի առաջարկությամբ գլխավորել է կաթոլիկ հավատացյալների համայնքը և տարել է կոնտրռևոլյուցիոն աշխատանք, որի համար Գերմանիայից ստացել է վարձատրություն: 1928 թ. լրտեսության մեղադրանքով բանտարկվել և դատապարտվել է: Աքսորավայրից վերադառնալուց շարունակել է տանել հակասովետական աշխատանք:

Բողոքը բերվել է նշված որոշումը բեկանելու և գործը կարճելու առումով - յանցակազմի բացակայության պատճառաբանությամբ. -

Դատական կոլեգիան, լսելով զեկուցումը, ծանոթանալով գործի տվյալներին և դատախազի եզրակացությամբ բողոքը պաշտպանելու մասին, գտավ, որ պետք է համաձայնվել բերված բողոքի հետ հետևյալ հիմունքներով.

Գործի նախաքննությամբ թույլ է տրված քր[եական] դատ[ավարության] օր[ենսգրքի] նորմաների կոպիտ խախտում, նրանում, որ Մելիք-Ադամյանը կալանավորվել է առանց սանկցիայի, մեղադրանք չի առաջադրվել, չի կատարված քր[եական] դատ[արանի] օր[ենսգրքի] 198 յ[օդվածի] պահանջները:

Մելիք-Ադամյանին կալանավորելու և դատապարտելու համար հիմք են հանդիսացել 1937 թ. օպերատիվ նյութերը, 1928 թ. մեղադրական եզրակացության պատճենները և վկաներ Գալոյանի, Գէորգյանի և Բադալյանի ցուցմունքները: Վկա Յ. Մ. Բադալյանի ցուցմունքը, որով մերկացվում է Մելիք-Ադամյանը հակասովետական աշխատանք տանելու մեջ, կոնկրետ չի և հավատ չի ներշնչում, քանի որ նա 1940 թ. ՆԳԺԿ զինվորական տրիբունալի կողմից դատապարտվել է օրգանին անճիշտ ինֆորմացիա տալու, զրպարտության և պրովոկացիայի համար:

Ինչպէս երեւում է գործի տուեալներից, գործի քննութեան ժամանակ եղել են Լենինական քաղաքի բաժանմունքի աշխատակիցներ՝ Ս. Սալոխեանեանը, Չիգչիկը, մեղադրական եզրակացութիւնը հաստատել է նոյն բաժանմունքի պետի տեղակալ Խ. Ա. Բաբայեանը, որոնք մի շարք գործերով կեղծիքներ կատարելու համար դատապարտուել են: Նման պայմաններում, Մելիք-Ադամեանի որոշ հարցերի շուրջ ինքնայանձնառական բացատրութիւններն կասկածանք են առաջացնում:

Մելիք-Ադամեանի 1928 թ. լրտեսութեան համար դատուած լինելն իր հաստատումը չի գտել: ՀՍՍՌ կենտրոնական արխիւի նիւթերով Մելիք-Ադամեանը որպէս լրտես չի անցնում (իմա՝ ճանաչւում - Ռ.Ա.): Գործի լրացուցիչ ստուգման ժամանակ վերահարցաքննուել է վկայ Մ. Գ. Գալոյեանը, որը հաստատել է (սանատորիայում անցած զրոյցի ժամանակ մեղադրեալի արտայայտութիւնը Տրոցկու մասին): Իր ցուցմունքը, սակայն Մելիք-Ադամեանի արտայայտութեան մէջ կոնտրռեւոլիւցիոն յանցանքի հասկացողութիւն չի պարունակում:

Հարցաքննուած նոր վկաներ Վ. Ա. Աւետիսեանը, Մ. Մ. Մարգարեանը, Գ. Ա. Գրիգորեանը եւ ուրիշները, որոնք Մելիք-Ադամեանին ճանաչում են համատեղ աշխատանքից, ցուցմունք են տուել, որ նա հակասովետական գործունէութեամբ չի զբաղուել, ու [նրան] բնութագրել են որպէս բարեխիղճ աշխատող:

Այսպիսով գործի տուեալներով Մելիք-Ադամեանին առաջադրուած մեղադրանքն անհիմն պէտք է համարել:

Վերոգրեալների հիման վրայ, եւ ղեկավարուելով քր[էական] դատ[ավա-րութեան] օր[ենսգրքի] 393 յ[օդուածի] 1-ին կէտով, դատական կոլեգիան՝

*ՈՐՈՇԵՑ*

Համաձայնուել ՀՍՍՌ դատախազի տեղակալի բողոքի հետ ՀՍՍՌ ՆԳԺԿ եռեակի 3/10-1937 թ. որոշումը, ըստ մեղադրանքի ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ ՌԱՖԱՅԷԼ ԿԱՐԱՊԵՏԻ ԲԵԿԱՆԵԼ, եւ գործը կարճել յանցակազմի բացակայութեան պատճառով:

Նախագահ՝ Լ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Անդամներ՝ ԽԱՆԱՄԻՐԵԱՆ, ԽՈՒՐՇՈՒԴԵԱՆ

ԿԱՏ[ԱՐԱԾՈՒ] ԽՈՒՐՇՈՒԴԵԱՆ
թիւ 1221 ՀՀ. 12/12-1957 թ. (թ. 67-68)

* * * * * * * * * * * * * * * * * * * * * * *

## ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՐՃՈՒԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՖՈՆԴ, Գործ 4291

Ընդհանուր քննչական ֆոնդ, գործ թիւ 7293 (Պահել ընդմիշտ) (ռուս.)
Տրդատ-Թաթոս Գրիգորեւիչ Մանուկեանի եւ
Եփրեմ Անդրէասովիչ Մկրտչեանի
Միասնաբար յարուցուած մեղադրանքի շուրջ (1 հատորով գործ)

Երկուսը խուզարկուել եւ բանտարկուել են 1938 Մարտի 5ին:
*Մանուկեան Տրդատ (Թաթոս) Գրիգորեւիչ* – ծնու[ած] 1875ին, Էջմիածնի (իմա՝ Վաղարշապատ – Ք.Ա.) շրջ[ան], Սամաղար գ[իւղ], Երեւանի բնակիչ, բանուոր, ներկայումս ժամանակաւորապէս չի աշխատում: 1897-1900 ծառայել է Կարսի բանակում որպէս կրտսեր ենթասպայ: 1931ին Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ կողմից ձերբակալուել է որպէս կրօնական, ունի կին, մէկ աղջիկ:
*Մկրտչեան Եփրեմ Անդրէասովիչ* – ծնու[ած] 1895ին Վաղարշապատի շրջ[ան], Վաղարշապատ գ[իւղ], Երեւանի բնակիչ, մասնագիտ[ութեամբ]՝ ուսուցիչ, աշխատում է Երքաղշինում՝ տնտեսագէտ, գիշերային կուրսի դասատուն: 1915-1916 Ցար[ական] բանակում գրագիր: Հալածանքների չի ենթարկուել: Ունի կին, 4 երեխայ:

*Մանուկեան Տրդատի հարցաքննութեան արձանագրութիւն, 1938, Մարտի 13* – խոստովանում է, որ 1923ին անդամակցել եւ ղեկավարել է կրօնական «էւանգելիստների» համայնքը Սամաղար գ[իւղում] Կրօնական եւ հակասովետական ագիտ գործունէութեան համար 1931ին ձերբակալուել եւ աքսորուել է 5 տարով, սակայն առողջական պատճառով ժամանակից շուտ ազատուել է, մեկնել Երեւան, այլ ոչ՝ Սամաղար գ[իւղում] քանի որ իր ձերբակալութիւնից յետոյ 1932ին ընտանիքը կուլակաթափ էր արուել, առգրաւուել էր գիւղում շարժական եւ անշարժ գոյքը: Երեւանում կառուցել է տուն եւ շարունակել է վարել կրօնական աշխատանք Երեւանի «Աւետարանականների» համայնքում, քարոզել Աւետարանը, որը ինքը համարում է միակ ճիշտ ուսմունքը: Համայնքի մէջ ներառել է շուրջ 100 մարդու, սակայն իրական անդամները 50 էին, «...որոնց մեծ մասին ինքն է հաւատացրել համայնքի մէջ»: «Ես հանդգնած եմ իմ հաւատի ճշմարտութեան մէջ: Անկախ կրօնը հակադիր է մեր մարքսիստական ուսմունքին, դրա համար էլ դուք կարող էք համարել այն հակայեղափոխական արարք: Ինձնից առաջ աւետարանիչ էր Բզնունի Յովհաննէսը, որը, աքսորից վերադառնալով, առողջութեան պատճառով (զրկուել էր երկու ոտքից) տնից դուրս գալ չէր կարող:

Ղեկավար խորհուրդում են՝
1. Սարգսեան Սարգիս - ՆԳԺԿի կողմից վերջերս ձերբակալուած
2. Մկրտչեան Եփրեմ - ՆԳԺԿի կողմից վերջերս ձերբակալուած
3. Աւետեան Սուրէն - Սարիփաշի բնակիչ
4. Յովհաննիսեան Կարապետ - Նորքի բնակիչ, ԵՊՀի պահակ
5. Տէր-Գալուստեան Երուանդ - դերձակ-մարզող

Բոլորը ծննդով երկրներ են ունեցել հաւաքներում, (Արտակայան- Ք.Ա.) միջոցները հաւաքում էին Կարապետ Յովհաննիսեանի ծաղում, 1938ին գանձապահ է ընտրուել Տէր-Գալուստեան Երուանդը: 1926ին համայնքը գրանցուել է, բայց յետագայում այն չեն գրանցել, իսկ տուրք մեզնից չեն պահանջել, դրա համար էլ չենք մուծել: Ստացւում է, որ մենք անլեգալ ենք գործել, բայց մենք ունէինք համապատասխան արտօնութիւն Երեւանում:

Այո, ընդունում եմ, որ մեր կրօնը ոչ մի ընդհանուր բան չունի սով[ետական] կարգերի հետ եւ ըստ Նոյեան դրանք՝ մեր քարոզները, հակասովետական են» (թ. 1-2,5ա-բ,6ա-բ,8ա-բ,9-10): (ստոր.)

* * *

*Մկրտչեան Եփրեմ Անդրէասովիչի հարցաքննութեան արձանագրութիւն, 1938, Մայիս 18* - ցարական բանակում ծառայել է 2 տարի՝ 1915-1916 թուին գնդի գրագիր: Դաշնակցական կառավարութեան ժամանակ եղել է ուսուցիչ Էջմիածնի շրջանի Վաղարշապատ, Սամաղար, Ֆրանգանոց գիւղերում: «Երբ դպրոցն արձակեց ինձ, ես գնացի կրօնական ուղիով՝ խուսափելով զինուորական ծառայութիւնից: Հայրս հաւատացեալ ադվենտիստ էր, ես էլ դարձայ [ադվենտիստական] 1917 թուից: Մինչեւ 1925 ուսուցիչ էի, 1925-1930՝ վիճակագիր էի Վաղարշապատի ԸԳԿում, 1931ին ինձ համարեցին կուլակ, կուլակաթափ արեցին, ընտանիքով հաստատուեցի Երեւանում, որ սեփական տուն կառուցեցի, իսկ երեկոները դասաւանդում էի գիշերային բանուորական կուրսերում՝ մինչեւ բանտարկուելը: 1932ին, որպէս «Ադվենտիստականների» համայնքի ակտիւ անդամ, քարոզիչ էի: Համայնքում կրօնական ղեկավար էի եւ միաժամանակ դասաւանդում էի աշխատանքային կուրսերում:

Մեր համայնքի խորհրդի անդամներն էին՝
1. Ես - Մկրտչեան Եփրեմ
2. Սարգսեան Սարգիս - ձերբակալուած
3. Աւետեան Սուրէն - Հայ տրամվայտրեստի (իմա՝ Հայտրամվայտրեստի - Ք.Ա.) ցանցի խառատիքի բաժնի աշխատող
4. Յովհաննիսեան Կարապետ - ԵՊՀի պահակ, Նորքի բնակիչ
5. Տէր-Գալուստեան Երուանդ - տնային դերձակ-մարզող

Համայնքի ղեկավարը Մանուկեան Թաթոսն էր: Քարոզում էին, որ միակ ճիշտ ուսմունքը Ադվենտիստն է, միւս ուսմունքները՝ կեղծ են, որ՝ աշխարհի բոլոր թագերը կեղծ են եւ ժամանակաւոր, որ՝ գալու է մեկ այլ աշխարհ՝ երկնային թագաւորութիւն, որ խիստ հաւատացեալը կը ստանայ իր յաւիտենական կեանքը, որ՝ Քրիստոսի երկրորդ գալուստով այրուելու է ամէնը եւ փրկուելու են միայն բարի հաւատացեալները: Սակայն մեր քարոզներում չենք

յիշատակել սով[ետական] իշխանութեան կործանումը, այլ ենթադրում է, որ Քրիստոսի երկրորդ գալուստով կը կործանուի նաեւ Սով[ետական] իշխ[ա-նութիւնը], ուստի ուզում ենք որքան կարելի է շատ մարդու ընդգրկել միակ փրկուող աւետարանականների համայնքում: Դպրոցականներ էլ կային մեր համայնքում: Պարզ է, որ կրօնական ուսմունքը հակադիր է մարքսիզմ-լենինիզմի ուսմունքին: Ընդունում եմ, որ մեր քարոզները ըստ էութեան եղել են հակասովետական:

Այո, ես սկզբունքներով «Աւետարանական» եմ եւ չէի կարող վարել կրօնական աշխատանք, որի բովանդակութիւնը հակասովետական էր, ինչում եւ ճանաչում եմ ինձ մեղաւոր»:

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

1. ՄԱՆՈՒԿԵԱՆ Տրդատ Գրիգորեւիչի եւ
2. ՄԿՐՏՉԵԱՆ Նվիրեմ Անդրէասովիչի մեղադրանքով

ՀԱՅԿ[ԱԿԱՆ] ՍՍՌ ՆԳԺԿ ՊԱՎի IV բաժնի պետ,
Պետ[ական] Անվտանգութեան աւագ լէյտենանտ
(ԿՈՆԴԱԿՈՎ) (թ. 12ա-թ.13-14) (ռուս.)

* * *

*Հարցաքննութեան արձանագրութիւն* (ռուս.)

Մեղադրեալ ՄԱՆՈՒԿԵԱՆ Տրդատ (նոյն ինքը՝ Թադոս) Գրիգորեւիչի - ծնուած 1873ին, ծննդով Հայկ[ական] ՍՍՌ Վաղարշապատի շրջանի Սամաղար գիւղից, հայ, ՍՍՌՄ քաղ[աքա]ցի, անկուսակցական, «աւետարանականների» կրօնական պաշտամունքի սեկտայի սպասաւոր: 1931ին ձերբակալուել է եւ դատապարտուել 5 տարով: Երեւան Քաղ[աք]:

13 Մարտ, 1938

Հ.- Տուէք հանգամանալից ցուցմունք, թէ ինչու՞ համար էք Դուք 1931ին ՆԳԺԿի մարմինների կողմից ազատազրկուել աքսոր:

Պ.- 1923ից ես հանդիսացել եմ Սամաղար գ[իւղի] «աւետարանականների» կրօնական համայնքի անդամ եւ ղեկավար: Յետագայ տարիներին եղել եմ համայնքի երէց եւ ակտիւ կրօնական, հակասովետական աշխատանք վարելու համար 1931ին ձերբակալուել եւ աքսորուել եմ 5 տարով, սակայն, նկատի ունենալով իմ հիւանդագին դրութիւնը, 1933ին ժամանակից շուտ ազատուել եմ եւ նորից վերադարձել Երեւան ք[աղաք]:

Հ.- Ինչու՞ ԴՈՒՔ աքսորից վերադառնալուց յետոյ չէք մեկնել ՁԵՐ Սամաղար գիւղը, այլ մնացել էք Երեւան ք[աղաք]ում:

Պ.- Աքսորից վերադառնալուց յետոյ ես մնացել եմ Երեւան քաղ[աք]ում երկու պատճառով. նախ՝ ձերբակալութիւնիցս յետոյ 1932ին իմ ընտանիքը կուլակաթափ է արուել, հանուել է իմ շարժական եւ անշարժ գոյքը գիւղում, դրա համար էլ իմ ընտանիքը հաստատուել է Երեւան քաղաքում, եւ երկրորդ՝ իմ ձերբակալութիւնից յետոյ Սամաղար գիւղի «աւետարանականների» համայնքը մնաց առանց երէցի եւ քայքայուեց: Այսպիսով, ես մնացի Երե-

տանում, կառուցեցի ինձ համար տուն եւ շարունակեցի վարել կրօնական աշխատանքը «աստուածաշնչականների» երեւանեան համայնքում ընդհուպ մինչեւ իմ ձերբակալման օրը:

Հ.- Ինչո՞վ է կայանում ՁԵՐ՝ աշխատանքը Երեւան քաղաքի «աստուածաշնչականների» համայնքում:

Պ.- «Աստուածաշնչականների» համայնքում ես, որպէս երէց, քարոզել եմ «աստուածաշունչը»: Իմ քարոզների բովանդակութիւնը հիմնականում այն էր, որ միակ ճշմարիտ ուսմունքը ես համարել եմ «աստուածաշունչը», իսկ մնացած բոլոր ուսմունքները եւ գիտութիւնները ես համարել եմ կեղծ: Ես քարոզել եմ այն մասին, որ աշխարհիկ բարիքները ունայն են եւ անիմաստ, որ գոյութիւն ունի այլ աշխարհ՝ երկնային թագաւորութիւն, որտեղ պիտի շարունակեն յաւիտենական ապրել անկեղծ հաւատացեալ մարդիկ: Եւ ուստի, բոլոր նրանք, ովքեր ուզում են փրկել իրենց հոգին չարչարանքներից եւ ապրել յաւիտեան, նրանք չպէտք է գնան անհաւատների հետեւից, այլ պէտք է գան մեր հետեւից՝ աստուածաշնչականների հետեւից:

Հ.- Այսպիսով, դուք թմրեցրել էք մնացած մարդկանց գիտակցութիւնը: Որքա՞ն մարդ էք ներգրաւել «աստուածաշնչականների» համայնք:

Պ.- Նրանք շատ են: «Աստուածաշնչականների» երեւանեան աղօթատուն էին յաճախում եւ յաճախում են շուրջ հարիւր մարդ, սակայն նրանցից համայնքի իրական անդամներ են համարւում միայն 50 մարդ, որոնց մեծ մասին ես եմ հաւաքագրել համայնքի մէջ:

Հ.- Նշանակում է՝ դուք աքսորից վերադառնալուց յետոյ, մնալով սովետական իշխանութեան նկատմամբ թշնամաբար տրամադրուած, շարունակել էք կրօնականի տեսքով վարել հակասովետական ագիտացիա: Դուք ընդունո՞ւմ էք դա:

Պ.- Ես համոզուած եմ իմ հաւատի՝ աստուածաշնչի ճշմարտացիութեան մէջ եւ որպէս այդպիսին շարունակել եմ վարել ակտիւ կրօնական աշխատանք: Անկասկած կրօնը հակադիր է ձեր մարքսիստական ուսմունքին, դրա համար էլ դուք այն կարող էք համարել հակայեղափոխական գործունէութիւն:

Հ.- Ուրիշ ի՞նչ միջոցներով էք դուք ներգրաւել ձեր կրօնական համայնքի մէջ մնացած անգիտակից անձանց:

Պ.- Համայնքի գումարից (կամաւոր նուիրատուութիւնների եւ խմբակների հաւաքից) մենք ֆինանսական օգնութիւն ենք ցոյց տուել աղքատ, կարիքաւոր ընտանիքներին, ինչը նոյնպէս նրանց կապում էր համայնքի հետ:

Հ.- Ձեզնից բացի էլ ո՞վ է համայնքում իրականացրել երէցի պաշտօն:

Պ.- Համայնքի երէց էի հանդիսանում ես, իսկ առաջ՝ նաեւ աստուածաշնչական ԲԶՆՈՒՆԻ Յովհաննէսը, որը աքսորից վերադառնալուց յետոյ, որպէս հաշմանդամ, առողջութեան պատճառով (նա զրկուել էր երկու ոտքից) տնից դուրս գալ չէր կարող, բայց 1937ին նրան ֆայտոնի վրայ մի քանի անգամ բերել են, եւ նա եղբայրներ է տեսել:

Երէցից բացի, համայնքը ղեկավարում էր խորհուրդը, որի անդամներն էին.

1. ՍԱՐԳՍՅԱՆ Սարգիս - ՆԳԺԿի կողմից ձերբակալուել է վերջերս,
2. ՄԿՐՏՉՅԱՆ Եփրեմ - ՆԳԺԿի կողմից ձերբակալուել է վերջերս,
3. ԱԻՆՏՅԱՆ Սարէն — սով[խոզական] ծառայող, բնակւում է Սարի թաղ, 4րդ կարգ, թիւ 19,
4. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Կարապետ - բնակւում է Նորքում, Պետ[ական] համալսարանի պահակ,
5. ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏՅԱՆ Երուանդ - մասնաւոր դերձակ:

Բոլոր սրանք յաջորդաբար ելոյթներ են ունեցել եւ քարոզել են համայնքում: Համայնքի միջոցները գտնուել են Կարապետ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ մօտ, 1938ին գանձապահ է ընտրուել ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏՅԱՆ Երուանդը:

Հ.- Դուք, որպէս համայնքի ղեկավար-երէց, ինչու՞ երկար տարիներ չէք գրանցել ձեր համայնքը եւ չէք վճարել պետ[ական] հարկ:

Պ.- 1926ին համայնքը գրանցուել է, բայց յետագայում այն չեն գրանցել ինձ անհասկանալի պատճառներով:

Հ.- Ճիշտ չէք խօսում: Ձեր համայնքը չեն գրանցել պետ[ական] հարկերից խուսափելու պատճառով, եւ դուք մի քանի տարի շարունակ հարկ չէք վճարել:

Պ.- Չգիտեմ: Ֆին[անսական] մարմինները մեզանից հարկ չեն պահանջել, եւ մենք չենք վճարել:

Հ.- Նշանակում է՝ դուք գործել էք անլեգալ՞:

Պ.- Այդպէս է դուրս գալիս, չնայած որ մենք ունեցել ենք սեփական աղօթատուն Երեւան ք[աղաք]ում:

Հ.- Դուք ընդունու՞մ էք, որ ձեր բոլոր արարքները անօրէն են եղել, իսկ քարոզները՝ հակասովետական:

Պ.- Այո, ընդունում եմ, որ մեր կրօնը ոչ մի ընդհանուր բան չունի սով[ետական] իշխանութեան հետ եւ դրա էութեան մեր քարոզները հակա-սովետական են:

Հարցաքննութեան արձանագրութիւնը ինձ ընթերցուել է, թարգմանուել է ռուսերէնից հայերէն, իմ խօսքերից գրանցուած է ճիշտ: ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հարցաքննեց՝
ՊԱՎի 5րդ բաժանմունքի IV բաժնի օպերլիազօր
Պետ[ական] անվտանգութեան միլիցիայի լէյտենանտ (Ս. Յափանճխեան)

ՃԻՇՏ է:
ՆԳԺԿի քննչ[ական] բաժնի քննիչ
Պետ[ական] անվտանգութեան սերժանտ (Գէորգեան)

*Ծանօթագր:* Բնագիրը գտնւում է քննչ[ական] գործ թիւ 7293ում (Գէորգեան)
(Կրկնօրինակը՝ քննչ[ական] գործ թիւ 7530ում [ԿԳԲ գործ 7469]) (թ. 8ա-բ,9ա-բ,10)

* * *

*Հարցաքննության արձանագրություն* (շար.)

Մեղադրեալ ՄԿՐՏՉՅԱՆ Եփրեմ Անդրէասովիչի - ծնված 1895ին, ծնունդով Հայկ[ական] ՍՍՌ Վաղարշապատի շրջանի համանուն գիւղից, բնակուել է Երևան ք[աղաք]ում, հայ, ՍՍՌՄ քաղ[աքա]ցի: Մինչև ձերբակալումը «Էրքաշինի» երեկոյեան կուրսերի տնտեսագէտ-դասատուն, անկուսակցական:

13 Մայիս, 1938

Հ.- Տուէք առաւել մանրամասն ցուցմունք գաղթական և այլ բանակներում ձեր ծառայութեան մասին:

Պ.- Ես ծառայել եմ միայն գաղթական բանակում, ընդամէնը երկու տարի՝ 1915-1916 որպէս դիվիզիայի շտաբի գրագիր:

Հ.- Որտե՞ղ էիք 1917, 18, 19, 20 թուականներին՝ Հայաստանում դաշնակցական իշխանութեան օրօք և ինչո՞վ էք զբաղուել:

Պ.- Դաշնակցական իշխանութեան օրօք 1917ից մինչև 1920 ես ուսուցիչ եմ եղել Վաղարշապատի շրջանի Վաղարշապատ, Սամաղար, Ֆրանգանոց գիւղերում: Զօրակոչուել էի դաշնակցական բանակ, բայց իմ դպրոցի վարիչի միջնորդագրով երկու ամսով ազատուեցի, որից յետոյ բոլոր ուսուցիչները ազատուեցին զինուորական ծառայութիւնից, և յետոյ՝ ես իմ կրօնական համոզմունքներով խուսափում էի զինուորական ծառայութիւնից:

Հ.- Դուք ե՞րբ դարձաք հատուածական և ի՞նչը դրդեց Ձեզ դրան:

Պ.- Իմ հայրը հատուածական «ավետարանական» էր, և ես, ստանալով կրօնական դաստիարակութիւն, 1917ից նոյնպէս դարձայ հատուածական «ավետարանական»:

Հ.- Ինչո՞վ էք դուք զբաղուել սովետական իշխանութեան օրօք:

Պ.- Սովետական իշխանութեան օրօք ես մինչև 1925 եղել եմ ուսուցիչ, 1925ից մինչև 1930՝ վիճակագիր Վաղարշապատի ՇԳԿում: 1931ին, իմ համաձայնով կուլակ, կուլակաթափ եմ արել, և 1931ին ես ընտանիքով հաստատուել եմ Երևանում, որտեղ կառուցել եմ սեփական տուն, աշխատել եմ «Էրքաշին»ում որպէս տնտեսագէտ, իսկ երեկոները դասաւանդել եմ բանուորական երեկոյեան կուրսերում՝ ընդհուպ մինչև իմ բանտարկութեան օրը:

Հ.- Ծառայելուց բացի ուրիշ որտե՞ղ և ի՞նչ աշխատանք էք իրականացրել:

Պ.- 1932ից ես, որպէս «ավետարանականների» համայնքի ակտիւ անդամներից մէկը, հանդիսացել եմ համայնքի խորհրդի անդամ և քարոզիչ՝ ընդհուպ մինչև իմ ձերբակալման օրը:

Հ.- Նշանակում է՝ դուք «ավետարանականների» համայնքում քարոզիչ էք եղել, իսկ բանուորական կուրսերում՝ դասատո՞ւ:

Պ.- Այո, «ավետարանականների» համայնքում ես եղել եմ կրօնական ղեկավար, միաժամանակ, բանուորական կուրսերում՝ դասատու:

Հ.- Մատնացոյց արէք ձեր «աւետարանականների» համայնքի խորհրդի անդամներին:

Պ.- Մեր «աւետարանականների» համայնքի խորհրդի անդամներն էին.

1. Ես - ՄԿՐՏՉԵԱՆ Եփրեմ,
2. ՄԱՐԳԱՐԵԱՆ Սարգիս - ձերբակալուած,
3. ԱՒԵՏԻՍԵԱՆ Ռուբէն - աշխատում է «Հայսպառկոոպի» ցանցում՝ խաղալիքների բաժնում,
4. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ Կարապետ - բնակւում է Նորքում, Պետ[ական] համալսարանի պահակ,
5. ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏԵԱՆ Եդուարդ - ծառայող դերձակ:

Համայնքի ղեկավարութեան ամբողջ աշխատանքը կենտրոնացուած էր խորհրդում, որի անդամները երբեմն հանդէս էին գալիս քարոզով, իսկ համայնքի երէցն էր Մանուկեան Քարգէն:

Հ.- Համառօտ պատմէք Ձեր քարոզների բովանդակութիւնը:

Պ.- Մեր քարոզների բովանդակութիւնը յանգում էր հետեւեալին՝ մենք քարոզում էինք, որ միակ ճիշտ ուսմունքը դա աւետարանն է, իսկ մնացած ուսմունքները եւ գիտութիւնները կեղծ են, որ բոլոր աշխարհիկ բարիքները ունայն են եւ անիմաստ, որ գոյութիւն ունի ուրիշ աշխարհ՝ երկնային թագաւորութիւն, որտեղ անկեղծ հաւատացեալները պիտի շարունակեն իրենց յաւիտենական կեանքը, որ կան բոլոր նշանները Քրիստոսի երկրորդ գալստեան համար, որի ժամանակ ողջ աշխարհը կրակով պիտի ոչնչացուի, իսկ այդ կրակից կ'ազատուեն միայն անկեղծ հաւատացեալ աւետարանականները եւ այլք:

Հ.- Նշանակում է՝ դուք կրօնական քարոզի ձեւով վարել էք ագիտացիա սովետական իշխանութեան իբր մօտեցող կործանման մասին:

Պ.- Մենք չենք ընդգծել եւ չենք յիշատակել սովետական իշխանութեան մասին, բայց ենթադրւում է, որ Քրիստոսի երկրորդ գալստեան ժամանակ պիտի կործանուի նաեւ սովետական երկիրը:

Հ.- Դուք քարոզել էք, որ բոլոր անաստուածները, այսինքն՝ բոլշեւիկները, պիտի ոչնչացուեն, իսկ դուք՝ հաւատացեալներդ, պիտի փրկուէք կրակից, դրա համար էլ աշխատել էք ինչքան հնարաւոր է շատ մարդկանց ներքաշել ձեր համայնքի մէջ կրօնական ագիտացիայի ճանապարհով, որտեղ որ պատահէր, ճի՞շտ է:

Պ.- Այո, բացի հաւատացեալներից, մնացած բոլոր մարդիկ, այդ թւում նաեւ անաստուածները՝ բոլշեւիկները, պիտի ոչնչացուեն: Չեմ ժխտում, որ ես, այդ թւում նաեւ մեր համայնքի միւս անդամները, ամէն կերպ ձգտել ենք մեր կրօնական համայնքի մէջ ներքաշել նոր մարդկանց եւ փրկել նրանց ոչ ճիշտ ուղուց:

Հ.- Ձեր քարոզների ժամանակ հաւաքներին, արդեօք, ներկայ եղե՞լ են դպրոցական տարիքի երեխաներ:

Պ.- Այո, եղել են դէպքեր, երբ մեր հաւաքներին ներկայ են եղել դպրոցականներ:

Հ.- Պաշտօնական հաւաքների կողքին, ժողովներից դուրս վարե՞լ էք արդեօք կրօնական քարոզ:
Պ.- Այո, եթէ եղել է դրա համար առիթ, ես կրօնական պարզաբանումներ եմ տուել ում որ պատահել է:
Հ.- Անձամբ դուք որքա՞ն մարդ էք հաւաքագրել համայնքի մէջ:
Պ.- Այդ հարցին դժուարանում եմ պատասխանել, բայց չեմ բացառում, որ ինձնից էլ հաւաքագրել եմ մարդկանց մեր «աւետարանականների» համայնքի մէջ, այդ է պահանջում նաեւ «աւետարանը», այսինքն՝ փրկել մոլորեալներին անաստուածների ու ճիշտ ուղուց:
Հ.- Նշանակում է՝ ձեր բոլոր քարոզներն ուղղուած էին Մարքսիզմ-Լենինիզմի ուսմունքի դէմ եւ, հետեւաբար, ընդդէմ սովետական իշխանութեան: Ընդունու՞մ էք դա:
Պ.- Պարզ է, որ կրօնական ուսմունքը հակադիր է Մարքս-Լենինեան ուսմունքին: Ընդունում եմ, որ մեր կրօնական քարոզները ըստ էութեան հակասովետական էին:
Հ.- Նշանակում է, որ Դուք, լինելով սով[ետական] աշխատող, դասատու, միաժամանակ վարել էք կրօնական, բայց ըստ էութեան՝ հակասովետական աշխատանք:
Պ.- Այո, ես համոզմունքով աւետարանական եմ ու չէի կարող կրօնական աշխատանք չիրականացնել, որի բովանդակութիւնը նաեւ հակասովետական էր, որի համար եւ ճանաչում եմ ինձ մեղաւոր:

Հարցաքննութեան արձանագրութիւնը ինձ կարդացուել է, գրուած է ճիշտ իմ խօսքերով:

Ե. Մկրտչեան

ՀԱՐՑԱՔՆՆԵՑ՝
ՊԱՎի 3րդ բաժանմունքի IV բաժնի օպերլիազոր
Պետ[ական] անվտանգութեան միլ[իցիայի] կրտ[սեր] լէյտենանտ (Ա. Յովհաննիսեան)

ՃԻՇՏ Է:
ՆԳԺԿի քնն[ական] բաժնի քննիչ
Պետ[ական] անվտանգութեան սերժանտ (Գէորգեան)

*Տեղեկանք:* Բնագիրը գտնւում է քնն[ական] գործ թիւ 7293ում (Գէորգեան)
(Կրկնօրինակը՝ քնն[ական] գործ թիւ 7530ում [ԿԳԲ գործ 7469]) (թ. 12ա-բ,13ա,14)

* * *

16 Մարտի, 1938 (ռուս.)

## ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ես, Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ 3րդ բաժանմունքի IV բաժնի օ[պերա-տիւ]/[լ]իազօրուած, Պետ[ական] Անվտանգութեան կրտսեր լէյտենանտ Յով-հաննիսեան Ա., քննելով 1938 Մարտի 14ի մեղադրական քննչ[ական] գործը՝

1. ՄԱՆՈՒԿԵԱՆ Տրդատ Գրիգորեւիչի – ծնու[ած] 1875ին, ծնունդով Հայկ[ա-կան] ՍՍՌ Վաղարշապատի շրջանի Սամաղար գիւղից, կրօնական կուրքի ծառայող, «Աւետարանականների» կրօնական համայնքի երէց, կրթուած, ն[ախկին]/կուլակ, 1931ին կուլակաթափուած, աքսորից վերադարձած, բնակ-ւում է Երեւա ն ք[աղաք]ում,

2. ՄԿՐՏՉԵԱՆ Եփրեմ Անդրէասովիչ – ծնու[ած] 1895ին, ծնունդով Հայկ[ա-կան] ՍՍՌ Վաղարշապատի շրջանի նոյն գիւղից, քարոզիչ եւ Երեւան ք[ա-ղաք]ի «Աւետարանական» կրօնական համայնքի Խորհրդի անդամ, ծառա-յող, Երքաղշինի՝ տնտեսագէտ եւ գիշերային կուրսերի դասախօս, բնակւում է Երեւան ք[աղաք]ում,

*պարզեցի հետեւեալը*՝

ՄԱՆՈՒԿԵԱՆ Տրդատ Գրիգորեւիչը 1923 թուից եղել է «Աւետարանա-կանների» կրօնական համայնքի ղեկավար եւ վարձկան երէց Վաղարշապա-տի շրջանի Սամաղար գիւղում, որտեղ ակտիւ կրօնական եւ հակասովետա-կան աշխատանք վարելու համար 1931ին ՊՔՎ ՆԳԺԿի օրգանների կողմից ձերբակալուել եւ աքսորուել է 5 տարով, նոյն 1931ին կուլակաթափ է եղել, իսկ նրա ընտանիքը աքսորուել է գիւղից: Աքսորից վերադառնալով՝ ՄԱՆՈՒԿ-ԵԱՆ Տ. Գ. էլ աւելի ակտիւօրէն է շարունակել վարել կրօնական եւ հակասո-վետական աշխատանք Երեւան ք[աղաք]ի «Աւետարանականների» համայն-քում, որն ինքն էր ղեկավարում որպէս վարձուած երէց ընդհուպ մինչեւ իր բանտարկութեան օրը:

ՄԿՐՏՉԵԱՆ Եփրեմ Անդրէասովիչը ակտիւ «Աւետարանական» է 1917 թուից: 1915-1916ին աշխատել է ցարական բանակի դիւիզիայի շտաբում որ-պէս գրագիր: Սովետական իշխանութեան նկատմամբ խիստ թշնամաբար տրամադրուած տարր, ն[ախկին]/կուլակ, կուլակաթափ է եղել 1931ին, որից յետոյ հաստատուել է Երեւան ք[աղաք]ում եւ իր ղեկավարութեան տակ վերց-րել «Աւետարանականների» համայնքը, միաժամանակ աշխատել է Սով[ետական] ապարատներում:

ՄԱՆՈՒԿԵԱՆ Տ. Գ. եւ ՄԿՐՏՉԵԱՆ Ե. Ա. - առաջինը՝ որպէս վարձուած երէց, երկրորդը՝ որպէս Խորհրդի անդամ եւ համայնքի քարոզիչ, ղեկավարել եւ ակտիւօրէն վարել են համայնքի հակասովետական-կրօնական աշխա-տանքը: Նրանք համայնքի ժողովներում սիստեմատիկաբար հանդէս են եկել ակնյայտ հակասովետական ագիտացիայով, նոր մարդկանց են հաւաքագրել իրենց համայնք, կազմակերպել են [դրամական] միջոցների հաւաքում եւ բա-ժանել են «կարիքաւոր» ընտանիքներին՝ նրանց համայնքի հետ կապելու նպատակով:

Համաձայն մեղադրեալներ ՄԱՆՈՒԿԵԱՆ Տ.ի եւ ՄԿՐՏՉԵԱՆ Ե.ի ցուցմունքների, նրանց բոլոր քաղուածները կրել են հակասովետական բնոյթ:
Իրենց ճանաչել են մեղաւոր:

*ՈՐՈՇԵՑԻ.*
Մանուկեան Տրդատ Գրիգորեւիչի եւ Մկրտչեան Եփրեմ Անդրէասովիչի քննչական գործը ուղարկել Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ Եռեակի քննարկմանը:

ՆԳԺԿ ՊԱՎ 5րդ բաժանմունքի IV բաժնի օ[պերատիւ]/լիազօրուած,
Պետ[ական] Անվտանգութեան կրտսեր լէյտենանտ (ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ)

ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ
ՆԳԺԿ ՊԱՎի 5րդ բաժանմունքի IV բաժնի պետի տեղակալ,
Պետ[ական] Անվտանգութեան լէյտենանտ (ԱՐՈՅԵԱՆ)

*ՏԵՂԵԿԱՆՔ.* Մեղադրեալներ ՄԱՆՈՒԿԵԱՆ Տ. Գ. եւ ՄԿՐՏՉԵԱՆ Ե. Ա. բանտարկուել են 1938 թ. Մարտի 10ին եւ պահւում են Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿի ներքին բանտում:

ՆԳԺԿ ՊԱՎ 5րդ բաժանմունքի IV բաժնի օ[պերատիւ]/լիազօրուած,
Պետ[ական] Անվտանգութեան կրտսեր լէյտենանտ (ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ)
(թ. 15-16)

* * *

Քաղուածք Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿի Եռեակի նիստի թիւ 81րդ արձանագրութիւնից (ռուս.)
*Լսեցին.*
15. Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿի IV բաժնի թիւ 7293 մեղադրական գործը, ՄԱՆՈՒԿԵԱՆ Տրդատ-Թադէոս Գրիգորեւիչ, ծնու[ած]. 1875ին, բնակւում է Երեւան ք[աղաք]ում, նախկին կուլակ:

Մեղադրւում է այն բանում, որ, հանդիսանալով աւետարանականների կրօնական համայնքի ղեկավար, վարել է ակտիւ հ/ս. աշխատանք, որի համար 1931ին ձերբակալուել է եւ դատապարտուել: Աքսորից վերադառնալուց յետոյ նորից կապուել է հ./յ., կուլակա-դաշն[ակցական] տարրերի հետ եւ, կրօնական ծէսերի անցկացման քողի տակ, ընդհուպ մինչեւ իր ձերբակալումը վարել է ակտիւ հ.-ս. աշխատանք:
*ՈՐՈՇԵՑԻՆ.*
ՄԱՆՈՒԿԵԱՆ Տրդատ-Թադէոս Գրիգորեւիչին ԳՆԴԱՀԱՐԵԼ:
Անձամբ իրեն պատկանող իրերը բռնագրաւել (թ. 17):

* * *

Քաղուածք Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿի Եռեակի նիստի թիւ 81րդ արձանագրութիւնից (ռուս.)

*Լսեցին.*

16. Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ-ի IV բաժնի թիւ 7293 ճնդադրական գործը, ՄԿՐՏՉՅԱՆ Եփրեմ Անդրէասովիչ, ծնու[ած] 1895ին, բնակւում է Երեւան ք[աղաք]ում, նախկին կուլակ:

Մեղադրւում է այն բանում, որ, հանդիսանալով աւետարանականների կրօնական համայնքի քարոզիչ, վարել է ակտիւ հ.-ս. աշխատանք, կապ է պահպանել հ.-յ., կուլակա-դաշն[ակցական] տարրերի հետ և կանոնաւոր, ընդհուպ մինչեւ իր ձերբակալման օրը, վարել է հ.-յ. ագիտացիա:

*ՈՐՈՇԵՑԻՆ*

ՄԿՐՏՉՅԱՆ Եփրեմ Անդրէասովիչին դատապարտել ՈւԱՃ, ՏԱՍ տարի ժամկէտով՝ ժամկէտը հաշւելով 1/III-38ից (թ. 18):

* * *

Մոսկուա ք[աղաք], ՍՍՌՄ Գերագոյն Սովետի Նախագահութեան նախագահ

Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆԻՆ

Համոզուած լինելով, որ Դուք ուշադրութեան էք արժանացնում և ընթացք էք տալիս աշխատողի դիմումներին, ուստի սրանով համարձակւում եմ դիմել ձեզ:

Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ օրգանների կողմից ես 6/III ս. թ. ձերբակալուել եմ, 15/III տեղի է ունեցել հարցաքննութիւն կրօնական հարցերի շուրջ՝ որպէս հաւատացեալ, Աւետարանական համայնքի գործուն անդամ: Իսկ մինչ այդ դեռեւս 1/III ս. թ. Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ Եռեակի կողմից առանց ճնդադրական յօդուածի դատապարտուել եմ 10 տարի աքսորի ՈւԱՃ, որտեղ գտնւում եմ մինչեւ օրս:

Դրանից տուժել է 6 շնչից բաղկացած ընտանիքս և ես, բացի այդ, մանկավարժական և տնտեսական ճակատներում իզուր է կորչել իմ 25ամեայ աշխատանքային ստաժը:

Քանի որ ՍՏԱԼԻՆԵԱՆ Սահմանադրութիւնը ապահովում է ՍՍՌՄ ամէն մի քաղաքացու խղճի ազատութիւնը, ուստի համոզուած եմ, որ իմ ձերբակալութիւնը և աքսորը միայն անհեթեթութիւն է:

Ծանօթացնելով Ձեզ վերոշարադրուածի հետ՝ խնդրում եմ Ձեր տրամադրուածութիւնը վերանայելու համար իմ գործը, և, ազատելով ինձ բանտարկութիւնից, չթողնել, որ մեռնի անճար ընտանիքս (նկարում ընտանիքս է՝ առանց մօրս) (Նամակին կցել է ընտանեկան լուսանկարը - Ք.Ա.) և ես՝ որպէս Սովետական ընտանիքի ազնիւ քաղաքացի:

Կցում եմ մէկ լուսանկար:

Բանտարկեալ Ե. Ա. Մկրտչեան

<u>Գտնւում եմ՝</u> Սվերդլովսկի մարզ, Վ. Տուրյա ք[աղաք] («Կրասնի-Եար» ճամբ[արային] կ[էտ]), Սեւուրալլագ, Եփրեմ Անդրէասովիչ Մկրտչեան

<u>Նախկին բնակիչ՝</u> Հայկ[ական] ՍՍՌ Երեւան ք[աղաք]ի Սարի-Թաղի, V շարք, թիւ 25

23/XI-1938 թ. (թ. 22ա-բ) (շրջ.)

* * *

ԽՍՀՄ Կոմ[ունիստական] Կուս[ակցության] Կենտ[րոնական] Կոմ[իտե]ի
Գերագույն Քարտուղար
ՍՏԱԼԻՆԻՆ
Բանտարկյալ-լագերական
Եփրեմ Անդրեասի Մկրտչյանից

Հայաստանի ԽՍՀ ՆԳԺԿոմ[իսար]ի մարմինների միջոցով ինձ ձերբակալեցին ս./թ. 6/III՝ որպես աստվածաբանական համայնքի անդամի, քննություն կատարեցին 15ին նույն ամսի, որի ժամանակ քննիչս, բացելով աստվածաշունչը, ընթերցեց մի քանի գլուխներ, համեմատեց Մարքսի ուսմունքի հետ, ցույց տվեց նրանց անհամաձայն լինելը ու յանգեց այն եզրակացության, որ ես, որպես աստվածաշունչը ընդունող հավատացյալ, յանցավոր եմ ու, արձանագրություն կազմելով՝ առանց թույլ տալու որ ինքս ընթերցեմ, <u>ստիպեց ստորագրել</u>: Այդ ժամանակամիջոցից տառապեցի բանտում և միայն աքսորավայրում իմացայ (ուր այժմ գտնվում եմ), որ Հայաստ[անի] ԽՍՀ ՆԳԺԿոմ[իսար]ի եռյակը Մարտի 1ին, այսինքն իմ քննութիւնից 15 օր յառաջ, որոշել է առանց մեղադրական յօդուածի, 10 տարով ազատել՝ հետեւեալ մեղադրանքները արձանագրելով. «1. Ներկայանում է Աստվածաբանական համայնքի քարոզիչ. 2. Կապ է պահպանել հակա-խորհրդային կուլակ-դաշնակցական էլեմենտների հետ ու մինչ իր բանտարկության օրը տարել (վարել - Ք.Ա.) է հակախորհրդային ագիտացիա»:

Վերոյիշեալ մեղադրանքները ես գտնում եմ միանգամայն ապօրինի ու անհիմն հետեւեալ պատճառաբանութեամբ՝

1. Ես քարոզիչ չեմ, մեր համայնքն ունէր իր յատուկ քարոզիչը.
2. Հակախորհրդային կուլակա-դաշնակցական էլեմենտների հետ կապ չեմ պահպանել, այդ մասին քննութեան ժամանակ խօսք չի եղել, չի արձանագրուած, ոչ մէկ ապացոյց չի էլ կարող լինի.
3. Հակախորհրդային արտայայտութիւն չեմ ունեցել, այդ մասին ոչ մէկ անձ վկայած չի լինի, քննութեան ժամանակ նոյնպէս ոչ մէկ խօսք չի եղել և *վերջապէս դա կը լինէր իմ սկզբունքներիս դէմ.*
4. Իմ հաւատացեալ լինելս, աստվածաբանական համայնքին պատկանելս նոյնպէս յանցանք չի համարում, քանի որ համաձայն ՍՏԱԼԻՆԵԱՆ Սահմանադրութեան տրուած է խղճմտանքի ազատութիւն:

Շատ պարզ է, որ եթէ վճիռ կայացուէր 1/IIIին, և 6 օր յետոյ բանտարկէին առանց ապացոյցի՝ անօրինական որոշում էլ համարուած կը լինէր, բայց այս սխալմունքով անբախտացել է ընտանիքս ու ես, խորտակուել է 4 զաւակներիս ապագան, այս բոլորից *բացի ստանալով եղած իմ 25 տարուայ ծառայութիւնս*՝ ստացած մանկավարժութեան ու տնտեսագիտական ասպարէզում, որոնցում Խորհրդային Իշխանութեան օրօք աշխատել եմ անխոնջ ու ծրագրած եւ

ստացել բազմաթիվ պարգևատրումներ, շնորհակալություններ ու գովասանական թերթիկներ:

Ծանոթացնելով Ձեզ վերոյիշյալների հետ խնդրում եմ՝ կարգադրել պահանջել իմ գործերը Հայաստան[ի] ԽՍՀից, քննություն կատարել ու *բեկանել* Հայաստան[ի] ԽՍՀ Ներք[ին] Գործ[երի] Ժող[ովրդական] Կոմ[իսարիատ]ի Եռյակի <u>առանց քննության ու առանց հանցակազմի 10 տարվա ազատազրկել որոշելու վճիռը</u> և թույլ տալ ինձ գնալ շարունակել ապրել և գործել որպես խորհրդային ծառայող անկուսակցական-բոլշևիկ և պահպանել անտերունչ մնացած 6 անձից բաղկացած ընտանիքիս գոյությունը:

Բանտարկյալ-աքսորական՝ Ե. Ա. Մկրտչյան

7/VIII-1938 թ.

| | |
|---|---|
| <u>Բանտարկության վայր՝</u> | <u>Տանը հասցեն՝</u> |
| Սվերդլովսկայա օբլաստ, Ալտինայ (շինարար[ական] մեղ երկ. գծի) լագեր[ային] պունկտ, 16 կիլոմետր | Հայաստան[ի] ԽՍՀ Երևան V շարք, Սարի Թաղ, թիվ 20 տուն |

Եփրեմ Անդրեասի Մկրտչյան (թ. 24ա-բ) (հայ.)

* * *

Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿի աշխատակիցները, ՍՍՌՄ ՆԳԺԿ և միութենական դատախազության աշխատակիցները վերանայման խնդրանքը չեղյալ են համարել, գտնելով, որ անհիմն է և որ՝ մեղավոր են:

Վերանայել են 1939 թ. Ապրիլի 5ին.

«...Նրանք (Եփրեմ Մկրտչյան, Տիգրան Մանուկյան – Ք.Ա.) երկուսով սերտ կապված էին միմյանց հետ և խրախուսանքը իր ատամնին զիջել ունէր բողոքականների մէջ քարոզ կատարելու: Մինչև 1920 թիվը նրանք զբաղված էին բողոքականների մէջ քարոզներ կարդալով, իսկ սկսած 1920 թվին չեն կռվել կարմիրների դէմ, բայց հրահրում և ուրիշներին ուղարկում էին կռվի կարմիրների դէմ», - ասել է վկայ Խաչատուր Պետրոսյանն իր ցուցմունքներում՝ 29.IV-1940 թ. հարցաքննության ժամանակ (թ. 25-26,30ա-բ): (հայ.)

* * *

Կինը՝ Անահիտ Մկրտչյանը, եւ բողոք է ներկայացրել Հայկ[ական] ՍՍՌ դատախազություն ամուսնու արդարացման համար, որը 1940 թ. Մայիսին մերժվել է: 1959 թ. նորից բողոք է ներկայացրել ՍՍՌՄ դատախազին իր ամուսնու գոնե յետմահու արդարացման համար, քանի որ, 10 տարով կը նստելով, մահացել էր: Կինը իր բողոքին կցել էր նաև 1932 թ. Կոմունալ տնտեսության Շինսեկցիայի II շրջանի աշխատողների կողմից Ե. Ա. Մկրտչյանի մասին տրված բնութագիրը:

ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ընկ. Եփրեմ ՄԿՐՏՉՅԱՆԸ 1931ի Սեպտեմբերի 3ից մինչև 1932ի Դեկտեմբերի 3ը ծառայել է Երքաղսովետի Շինսեկցիայի Արդ շրջանում որպես հաշվապահ և վիճակագիր: Իր վրայ դրված աշխատանքները կատարել է բավական բարեխղճորէն և ճշտապահ: Ծառայության ընթացքում ոչ մի բաց-

բռնած օր չի ունեցել: Աշխատողների հետ բաւական բարեկիրթ էր, նրանց բոլոր պահանջների նկատմամբ զգայուն եւ հնարաւորութիւնների ներածին չափով բաւարարել է նրանցից իւրաքանչիւրին:

Ակտիւ մասնակցութիւն է ունեցել հասարակական աշխատանքին: Տեղափոխուել է Շինանկցիայի Կենտրոնական աշխատակազմ՝ պաշտօնի բարձրացման հետեւանքով:

II շրջանի աշխդեկ
Ահարոնեան

10/XII-1932
Երեւան (թ. 35,37-38) (ռուս.)

* * *

Եփրեմ Մկրտչեանը մահացել է 1942 թ. Դեկտեմբերին՝ աքսորային խանգարումից (թ. 39): (հայ.)

* * *

1957 թ. Հոկտեմբերի 30ին վկայ Բենիամին Քոչարեանը համագիւղացի Եփրեմ Մկրտչեանի մասին ասել է. «...Մկրտչեանը գիւղում աշխատել է որպէս ուսուցիչ, բայց նա իր ընտանիքով տեղափոխուեց Երեւան, աշխատում էր Քաղսովետում՝ պլանային բաժնում եւ միշտ իր աշխատանքում եղել է օրինակելի ու բարեխիղճ աշխատող, այնպէս որ ես նրանից որեւէ հակասովետական բան չեմ նկատել, եւ ճիշտ չի այն բանը, որ իբր թէ նա հակահեղափոխական ագիտացիա է կատարել գիւղացիների մէջ եւ այլն: Կոլխոզի կազմակերպման ժամանակ նա եղել է Երեւանում եւ գիւղի հետ ոչ մի առնչութիւն չի ունեցել: Դա զրպարտութիւն է» (թ. 43բ): (հայ.)

* * *

1957 թ. Հոկտեմբերի 3ին վկայ Պետրոս Սարգսեանն ասել է. «...Մանկապարտէզից ճանաչում եմ համագիւղացիներ Տրդատ Մանուկեանին եւ Եփրեմ Մկրտչեանին. նրանց հետ թշնամութիւն եւ բարեկամութիւն չունեմ: Ես հիմա էլ նրանց մասին կարող եմ ասել, որ եղել են որպէս եկեղեցական քաղաքացի-[ներ], ազնիւ մարդ[իկ] եւ պէտք է ասեմ, որ այդպիսի մարդիկ մեզ քիչ ունենք, որոնք իրենց հոգեբանութեամբ եղել են մաքուր եւ հարազատ մեր հասարակութեանը: Բայց միաժամանակ պէտք է ասեմ, որ երկուսն էլ իրենց գաղափարներով հոգեւորականներ էին եւ աստուածային ճշմարտութիւնն էին քարոզում, ճանաչում էին հոգեւոր գաղափարները, բայց դրանով չի կարելի ասել, որ նրանք կատարել են հակասովետական աշխատանք: Նրանք իրենց շրջապատում, որպէս կիրթ ու զարգացած մարդիկ, իրենց ազնուութեամբ վայելում էին բոլորի համակրանքը, եւ ես իմ ճանաչած ժամանակում չեմ տեսել կամ երբեք չեմ լսել, որ նրանք բաց տան հակասովետական ագիտացիա կամ որեւէ աշխատանք: Այնպէս որ, բացի դրականից նրանց մասին ես ոչինչ չունեմ ասելու...» (թ. 46ա-բ): (հայ.)

* * *

1957 թ. 2/XII Հայկ[ական] ՍՍՌ դատախազի տեղակալ, արդարադատութեան աւագ խորհրդական Եռ. Դոկասեանը, Մկրտչեան Եփրեմի կնոջ՝ Ա-

Նախիր Մկրտչեանի դիմումի հիման վրայ վերանայել է Մանուկեան Տ. եւ Մկրտչեան Եփ[րեմի]. գործերը, որոնք ՀՍՍՌ ՆԳԺԿ եռեակի 1938 թ. Մարտի 4ի որոշմամբ դատապարտուել էին տարբեր պատժաչափերի, եւ գտել է, որ անհիմն են դատապարտուել՝ պատճառաբանելով. «...Ինչպէս երեւում է գործի ուսումնասիրումից, Մանուկեանը եւ Մկրտչեանը կալանաւորուել ու դատապարտուել են սոցիալիստական օրինականութեան նորմաների բացայայտ կոպիտ խախտումներով. բնական է չշրջանցել այն փաստը, որ ՀՍՍՌ ՆԳԺԿ եռեակը, ոտնահարելով պրոցեսուալ նորմաների ամէնատարրական կանոնները, առանց որեւէ գործ սկսելու եւ առանց որեւէ մէկին ու փաստ ձեռքի տակ ունենալու, 1938 թ. Մարտի 4ին նախօրօք դատապարտման որոշում են կայացրել Մանուկեանի եւ Մկրտչեանի նկատմամբ, որից յետոյ՝ 1 օր անց, կազմում են նրանց ձերբակալման եւ տան խուզարկութեան կատարելու մասին որոշում, 2 օր անց՝ 7/3-38 թ., կատարում են խուզարկութիւն, իսկ 5 օր անց՝ 9/3-1938 թ., նրանց կալանքի են վերցնում եւ, վերջապէս, դատապարտման որոշում կայացնելուց յետոյ՝ 9 օր անց 15/3-1938 թ., հարցաքննում են մեղադրեալներ Մանուկեանին եւ Մկրտչեանին եւ, առանց լրացուցիչ գործողութիւն կատարելու, դատապարտման մասին վճիռը ի կատար են ածում:

*ՄԻՋՆՈՐԴՈՒՄ ԵՄ.*

ՀՍՍՌ ՆԳԺԿի եռեակի 1938 թ. Մարտի 4ի որոշումը բեկանել, Եփրեմ Անդրէասի Մկրտչեանի եւ Տիգրան Գրիգորի Մանուկեանի նկատմամբ յարուցուած գործը կարճել առաջադրուած մեղադրանքը չհիմնաւորուելու պատճառով» (p. 52-53): (հայ.)

* * *

<u>ՈՐՈՇՈՒՄ թիւ 5/445</u>

Հայկ[ական] ՍՍՌ Գերագոյն դատարանի քր[էական] գործերի դատական կոլեգիան 7/12-57 թ. նիստում կազմով՝ Նախագահ Լ. Առաքելեան

Քննելով դատախազի տեղակալի հսկողական բողոքը՝

«...*ՈՐՈՇԵՑ.*

Համաձայնել ռեսպուբլիկայի դատախազի տեղակալի հսկողական բողոքի հետ, բեկանել ՀՍՍՌի ՆԳԺԿի եռեակի 1938 թուի Մարտի 4ի որոշումը Եփրեմ Անդրէասի Մկրտչեանի եւ Տիգրան Գրիգորի Մանուկեանի նկատմամբ եւ գործը վարոյթում կարճել յանցանքի ապացուցուած չլինելու պատճառով» (p. 56-57): (հայ.)

* * *

ԳԱՂՏՆԻ (հայ.)

ՈՐՈՇՈՒՄ թիւ 5/445

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ

Գերագոյն դատարանի քրէական գործերի դատական կոլեգիան 7/12-57 թ. նիստում կազմով՝

Նախագահ՝ Լ. Առաքելեան
Անդամներ՝ Սարգսեան, Խաչատրեան
Դատախազ՝ Դամբարեան

Քննեց դատական նիստում Գերագոյն դատարանի անդամ Ա. Սարգսեանի զեկուցմամբ Հայկական ՍՍՌ-ի դատախազի տեղակալի հսկողական բողոքը՝ Հայկական ՍՍՌ-ի ՆԳԺԿ-ի եռեակի 1938 թուի Մարտի 4ի որոշման դէմ, որով՝

1. ՏՐԴԱՏ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆԸ, 1875 թուի ծնուած, ծնուել և բնակուել է Էջմիածնի շրջանի Սամաղար գիւղում, ամուսնացած, անկուսակցական, չդատուած, դատապարտուել է պատժի առանձնագոյն չափին:

2. ԵՓՐԵՄ ԱՆԴՐԷԱՍԻ ՄԿՐՏՉԵԱՆԸ, 1895 թուի ծնուած, ծնուել է Էջմիածնում, ամուսնացած, գրագէտ, անկուսակցական, մինչեւ ձերբակալուելը աշխատել է Եր[եւանի] Քաղտնտեսում որպէս տնտեսագէտ, չդատուած, դատապարտուել է ազատազրկման 10 տարի ժամանակով:

Տ. Մանուկեանը եւ Ե. Մկրտչեանը դատապարտուել են այն բանի համար, որ նրանք, լինելով կրօնական անձնաւորութիւններ եւ՝ որպէս բողոքականներ, իրենց քարոզներում կատարել են հակասովետական ագիտացիա, կապ են ունեցել հակասովետական եւ դաշնակցական էլեմենտների հետ եւ նիւթական օժանդակութիւն են ցոյց տուել բանդիտներին:

Հսկողական բողոք է բերուած յիշեալ որոշումը բեկանելու եւ գործը կարճելու առումով:

Լսելով զեկուցումը եւ դատախազի եզրակացութիւնը, որը պաշտպանում է բերուած բողոքը, դատական կոլեգիան, ծանօթանալով գործի տուեալներին, գտաւ, որ Մկրտչեանի եւ Մանուկեանի նկատմամբ եղած յիշեալ որոշումը պէտք է բեկանել եւ գործը վարույթում կարճել հետեւեալ պատճառաբանութեամբ.

1. Գործով քննութիւնը կատարուած է խիստ թերի եւ կողմնակալ կերպով խախտուած է Սովետական օրինականութիւնը, նրանում, որ յիշեալ եռեակը, ոտնահարելով քր[էական] դատ[ավարութեան] օր[ենսգրքի] պահանջները, առանց որեւէ գործ սկսելու եւ առանց որեւէ նիւթեր ու փաստեր ձեռք բերելու, 1938 թուի Մարտի 4ին նախօրօք նրանց նկատմամբ դատապարտման որոշում է կայացրել, որից մէկ օր անց կազմում են նրանց ձերբակալման եւ բնակարանները խուզարկելու որոշումներ, եւ 5 օր անց նրանց կալանաւորում են, եւ վերջապէս՝ դատապարտման որոշում կայացնելուց 9 օր անց, այսինքն՝ 13/3-1938 թուին, հարցաքննում են Մանուկեանին եւ Մկրտչեանին, եւ առանց լրացուցիչ գործողութիւններ կատարելու, նրանց նկատմամբ եղած դատապարտման որոշումը ի կատար են ածում:

Յետագայում Մկրտչեանի բողոքի հիման վրայ ՀՍՍՌ-ի դատախազի կողմից հսկողական կարգով վերանայւում է գործը եւ ուղարկւում է լրացուցիչ քննութեան, որտեղ արդէն հարցաքննւում են որպէս վկաներ Խ. Ղարիբեանը, Գ. Աղայեանը, Ի. Պետրոսեանը, Վ. Մանուկեանը, որոնք ինչպէս այն ժամանակ, այնպէս էլ 1957 թուին կատարուած լրացուցիչ քննութեան ժամանակ, վերահարցաքննուած վերոյիշեալ վկաները Մկրտչեանի եւ Մանուկեանի հակասովետական գործունէութեան մասին ոչինչ չեն ասել, յատկապէս, նրանց դաշնակցական առաջնորդի ծանօթացնելու, բոլշեւիկների դէմ պայքարելու,

թանդիստներին օգնելու եւ հակասովետական ագիտացիա կատարելու մասին, այս յիշեալ վկաները միայն յայտնել են, որ Մանուկեանը եւ Մկրտչեանը եղել են հաւատացեալներ, որոնք միայն կրօն են քարոզել:

Բացի այդ, յաւելեալ հարցաքննուել են որպէս վկաներ Բենիամին Ջաղարեանը, Անտոնիա Կիրակոսեանը եւ Պետրոս Սարգսեանը, որոնք Մկրտչեանին եւ Մանուկեանին ճանաչում են, որպէս համագիւղացիներ, նրանց բնութագրել են դրականապէս եւ յայտնել են, որ նրանք միայն եղել են հաւատացեալ մարդիկ: Այսպիսով գործի տուեալներով եւ կատարուած նոր նախաքննութեամբ Մանուկեանին եւ Մկրտչեանին վերագրուող մեղադրանքները չեն հիմնաւորուած: Ուստի, վերոգրեալի հիման վրայ եւ ղեկավարուելով քր[էական] դատ[ավարութեան] օր[ենսգրքի] 393 յօդուածով, դատական կոլեգիան՝

***ՈՐՈՇԵՑ.***

Համաձայնուել ռեսպուբլիկայի դատախազի տեղակալի հսկողական բողոքի հետ. ՌԵԿԱՆԵԼ ՀՍՍՌ-ի ՆԳԺԿ-ի եռեակի 1938 թուի Մարտի 4ի որոշումը Նիկողոս Անդրէասի Մկրտչեանի եւ Տրդատ Գրիգորի Մանուկեանի նկատմամբ եւ գործը վարոյթում կարճել յանցանքի ապացուցուած չլինելու պատճառով:

Նախագահ՝ Լ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Անդամներ՝ ՍԱՐԳՍԵԱՆ, ԽԱՉԱՏՐԵԱՆ

ԿԱՏ[ԱՐԱԾՈՒ] ՍԱՐԳՍԵԱՆ
թիւ 1180 ՀՀ. 7/12-57 թ. (թ. 56-57)

* * * * * * * * * * * * * * * * * * * * * * * *

Գ. Երուանդ Գալուստովիչ Տէր-Գալուստեանի Թղթածրար

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ
ԿԱՐԳՈՒԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՖՈՆԴ, Գործ 7469

Ընդհանուր քննչական ֆոնդ, գործ թիւ 7530 (Պահել ընդմիշտ) (ռուս.)
Երուանդ Գալուստովիչ Տէր-Գալուստեանի
Նկատմամբ յարուցուած մեղադրանքի շուրջ (1 հատորով գործ)

Երուանդ Գալուստովիչ Տէր-Գալուստեանը ծնու[ած] 1893ին Վանում, բնակւում է Երեւանում, դերձակ, տանը մասնաւոր աշխատող է, մինչեւ յեղ[ափոխութիւնը]՝ տէրտէր, [ունի] կին, 4 երեխայ, քոյր: Երեւան քաղաքում «Աւետարանական» համայնքի քարոզիչ, հոգեւոր ընտանիքից, հայրը հոգեւորական էր: Գրաճանաչ, անկուս[ակցական], նախկինում չի դատուել:

*Մեղադրեալ Տէր-Գալուստեան Երուանդի ցուցմունքները.*
*Հարցաքննութեան արձանագրութիւն, 1938, Մարտ 17*

Հարց- Դուք մեղադրւում էք այն բանում, որ, մինչեւ ձեր ձերբակալման օրը, լինելով «Աւետարանականների» կրօնական համայնքի խորհրդի անդամ, կրօնական քարոզի տեսքով կանոնաւոր վարել էք ակտիւ հակասովետական ագիտացիա: Տուէք ճշմարտացի ցուցմունք ձեր հակասովետական գործունէութեան մասին:

Պատասխան- Այո, ես 1930ից Երեւան ք[աղաք]ի «Աւետարանականների» կրօնական համայնքի ակտիւ անդամներից եմ: Սկսած 1936ից մինչեւ իմ ձերբակալման օրը եղել եմ համայնքի խորհրդի անդամ եւ, հետեւաբար, որպէս այդպիսին, ղեկավարել եմ համայնքի աշխատանքները եւ հանդէս եմ եկել քարոզներով:

Հ.- Թուարկէք ձեր համայնքի անդամների անունները:

Պ.- Մեր «Աւետարանականների» համայնքի խորհրդի անդամներն էին՝

1). Ես՝ Տէր-Գալուստեան Երուանդը,
2). Սարգիսեան Սարգիս - վերջերս ձերբակալուած,
3). Մկրտչեան Եփրեմ - վերջերս ձերբակալուած,
4). Աւետեան Սուրէն եւ
5). Յովհաննիսեան Կարապետ:

Համայնքի վարձուած երէց է հանդիսացել Մանուկեան Թաթոսը, որը նոյնպէս ձերբակալուել էր վերջերս:

Հ.- Շարունակէք ձեզ տրուած առաջին հարցի վերաբերեալ ձեր ցուցմունքները ըստ էութեան՝ ձեր համայնքի հակասովետական աշխատանքի մասին:

Պ.- Մենք հակասովետական ագիտացիա չենք վարել: Մեր քարոզների բովանդակութիւնը հիմնականում հետեւեալն էր՝ մենք, այդ թւում եւ ես, քարոզում էինք, որ միակ ճիշտ ուսմունքը դա «Աւետարանն» է, իսկ մնացած ուսմունքներն ու գիտութիւնները ամբողջութեամբ կեղծ են, որ բոլոր աշխարհիկ բարիքները ունայն են եւ անիմաստ, որ գոյութիւն ունի այլ երջանիկ աշխարհ՝ երկնային թագաւորութիւն, որ անկեղծ հաւատացեալները մահից յետոյ այս մեղաւոր աշխարհից կը յայտնուեն երկնային թագաւորութիւնում եւ յաւիտեան պիտի ապրեն այնտեղ երջանիկ կեանքով: Մենք քարոզում էինք նաեւ այն, որ անպայման Քրիստոսը երկրորդ անգամ կը գայ մեր աշխարհ, որ այժմ մօտեցել է նրա գալուստը, որի համար բոլոր նախանշանները կան: Այդ նախանշանները մենք համարում էինք մի շարք այլ երկրներում «Աւետարանի» խօսքերից սկսուած պատերազմը, գոյութիւն ունեցող աղէտները եւ այլն, ընդ որում մենք ասում էինք, որ Քրիստոսի երկրորդ գալստեան ժամանակ ողջ աշխարհին, այդ թւում նաեւ մեր երկիրը՝ ՍՍՌՄը, պիտի ոչնչացուի կրակով, եւ կրակից պիտի ազատուեն միայն անկեղծ հաւատացեալները, այսինքն մենք՝ «Աւետարանականները»:

Հ.- Ուրեմն դուք կրօնական քարոզի տեսքով ագիտացիա էք արել Սովետական իշխանութեան իբր մօտեցող կործանման մասին, հաստատո՞ւմ էք դա:

Պ.- Մենք չենք ընդգծել, որ ՍՍՌՄ-ը պիտի կործանուի Քրիստոսի երկրորդ գալուստով, բայց ենթադրում է, որ բոլոր աշխարհի հետ միասին պիտի կործանուի եւ ՍՍՌՄ-ը, մանաւանդ որ, վերջինս է անհաւատների երկիր:

Հ.- Եւ դրա համար դուք ամէն կերպ ջանացել էք ընտրել մարդկանց եւ ներքաշել էք ձեր համայնքի մէջ:

Պ.- Այո, դա մեր սուրբ պարտականութիւնն է՝ փրկել մոլորուածներին անհաւատների սխալ ուղուց, նրանց դարձնել անկեղծ հաւատացեալներ, որպէսզի «երկնային թագաւորութիւնում» [նրանք] տեղ ունենան:

Հ.- Դուք անձամբ որքա՞ն մարդ էք հաւաքագրել ձեր համայնք:

Պ.- Դժուարանում եմ այդ ասել: Այժմ մեր համայնքում հաշւում է հարիւր մարդ: Նրանց մի մասը, անխօս, հաւաքագրուած է իմ կողմից:

Հ.- Դուք կրօնական քարոզն անց էք կացրել համայնքու՞մ, թէ՝ որտեղ պատահի:

Պ.- Ես կրօնական քարոզ վարել եմ համայնքի ժողովներում, բայց դրա հետ մէկտեղ՝ եւ ժողովներից դուրս, որտեղ կար համապատասխան հիմք:

Հ.- Ձեր ժողովներին համայնքի անդամների թւում մասնակցե՞լ են արդեօք դպրոցականներ:

Պ.- Այո, մեր ժողովներին մասնակցել են նաեւ դպրոցական տարիքի երեխաներ: Մաքսիմ Գորկու անուան դպրոցը գտնւում էր մեր աղօթատան մօտ, եւ նրանք, լսելով մեր ֆիսհարմոնիայի ձայները եւ երգեցողութիւնները, գալիս եւ լսում էին մեզ:

Հ.- Այսպիսով, դուք վարել էք ակտիւ կրօնական եւ հակասովետական ագիտացիա ամէնուրեք, որտեղ կարողացե՞լ էք:

Պ.- Այո, կրօնական քարոզ մենք վարել ենք ամէնուրեք: Ընդունում եմ, որ կրօնի մասին ուսմունքը հակադիր ուսմունք է Մարքս-Լենինեան գիտութեանը, եւ, հետեւաբար, մեր բոլոր քարոզներն ըստ էութեան ունեցել են հակասովետական բովանդակութիւն:

Հ.- Տարեկան որքա՞ն անդամական վճար էք դուք մուծել:

Պ.- Ես որքան կարողացել եմ՝ մուծել եմ: Դա կամաւոր նուիրատուութիւն է: 1937ին ես մուծել եմ 130 ռուբլի:

Հ.- Ինչի՞ վրայ էք դուք վատնել համայնքի անդամներից ստացած այդ խոշոր հասարքները:

Պ.- Այդ գումարներից մենք երէցին վճարել ենք աշխատավարձ ամիսը 250 ռուբլի եւ ֆինանսական աջակցութիւն ենք ցոյց տուել աղքատ ընտանիքներին:

Հարցաքննութեան արձանագրութիւնը ինձ թարգմանել են ռուսերէնից հայերէն: Կազմուած է ճիշտ իմ խօսքերից:

Գալուստեան Երուանդ (թ. 3ա-բ,4ա-բ,5ա-բ,6)

* * *

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ» (ռուս.)
Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ ՊԱՎ-ի IV բաժնի պետ

Պետ[ական] Անվտանգութեան ավագ լէյտենանտ (Կոնդակով)
« » մարտ, 1938

Տէր-Գալուստեան Եղուարդ Գալուստովիչի
մեղադրանքի առիթով

## ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ես, օպերլիազոր, ՆԳԺԿ ՊԱՎի 5րդ բաժանմունքի IV բաժնի պետականվտանգութեան կրտսեր լէյտենանտ Ցովհաննիսեան Ս., 1938 Մարտի 19ին քննելով ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏԵԱՆ Եղուարդ Գալուստովիչի (ծնուած 1893ին, Վանում (Թուրքիա), դերձակ - մասնաւոր արհեստաւոր, ծագումով՝ հոգեւորական, գրագէտ, բնակւում է Երեւան ք[աղաք]ում) նկատմամբ քննչական գործը,

*Հաստատել եմ հետեւեալը՝*

ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏԵԱՆ Եղուարդ Գալուստովիչը 1930ից Երեւան ք[աղաք]ի «Աւետարանականների» կրօնական համայնքի ակտիւ անդամներից մէկն է: 1936ից ընդհուպ մինչեւ ձերբակալութեան օրը հանդիսացել է համայնքի խորհրդի անդամ եւ քարոզիչ:

Աւետարանականների հաւաքներում, ինչպէս եւ դրանից դուրս, կրօնական քարոզների տեսքով հանդէս է եկել եւ ապացուցել, որ իբր միակ ճիշտ ուսմունքը դա «աւետարանի» մասին ուսմունքն է, որ՝ մնացած բոլոր գիտութիւնները կեղծ են:

ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏԵԱՆ Ե. Գ. ապացուցում էր, որ մօտենում է Քրիստոսի երկրորդ գալուստը, որի ընթացքում կրակով ոչնչացուելու է ողջ աշխարհը, յատկապէս անաստուած երկրները՝ ՍՍՌՄը, եւ՝ որ այդ կրակից պիտի ազատագրուեն միայն հաւատացեալները՝ աւետարանականները:

Կանոնաւոր կրօնական ագիտացիայի եւ իբր «կարիքաւորներին» ֆինանսական աջակցութիւն ցոյց տալու ճանապարհով, ինքը խորհրդի այլ անդամների հետ միասին (այժմ՝ ձերբակալուած) անգիտակից մարդկանց հաւաքագրել է համայնքի մէջ:

Մեղադրեալ ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏԵԱՆԸ ընդունել է, որ աւետարանականների բոլոր քարոզներն ունեցել են հակասովետական բնոյթ:

<u>ՈՐՈՇԵՑԻ.</u>

Քննչական գործը ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏԵԱՆ Եղուարդ Գալուստովիչի մեղադրանքով ուղարկել Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿի Եռեակի քննարկմանը:

ՊԱՎի 5րդ բաժանմունքի IV բաժնի օպերլիազոր
Պետ[ական] անվտանգութեան կրտսեր լէյտենանտ (Ցովհաննիսեան)

«Համաձայն եմ»
ՊԱՎի 5րդ բաժանմունքի IV բաժնի պետի տեղակալ
Պետ[ական] անվտանգութեան լէյտենանտ (Արայեան)

ՏԵՂԵԿԱՆՔ: Մեղադրեալ ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏԵԱՆ Երուանդ Գալուստովիչը ձերբակալուել է 16/III-38ին եւ պահւում է Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ ներքին բանտում:

ՊԱՎի 5րդ բաժանմունքի IV բաժնի օպերլիազոր
Պետ[ական] անվտանգութեան կրտսեր լէյտենանտ (Յովհաննիսեան) (p. 7)

* * *

Քաղուածք Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ Եռեակի նիստի
թիւ 72 արձանագրութիւնից (ռուս.)

28 Փետրուար, 1938

Լսեցին.

142. Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ ՊԱՎի IV բաժնի թիւ 7530 գործը՝ ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏԵԱՆ Երուանդ Գալուստովիչի, 1893ի ծնունդ, Երեւան ք[աղաք]ի բնակիչ, արհեստաւոր:

Մեղադրւում է այն բանում, որ, հանդիսանալով «Անտարածականների» կրօնական համայնքի ակտիւ անդամ, կրօնական քարոզներ անցկացնելու տեսքով, տարածել է հ/յ սադրիչ լուրեր սով[ետական] կարգերի հասցէին, ընդհուպ մինչեւ բանտարկութեան օրը եղել է հ/յ տարրերի շրջանում եւ շարունակել վարել հակասովետական աշխատանք:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏԵԱՆ Երուանդ Գալուստովիչին դատապարտել ՈւԱՃ տաս տարի ժամկէտով՝ սկսած 16/III-38ից (p. 8):

* * *

ՍՍՌՄ Ներքին Գործերի Կոմիսար
Լ. Պ. Բերիային
Սեւուրալլագի Իրբիտի ճամբարային կէտից կալանաւոր
Տէր-Գալուստեան Երուանդ Գալուստովիչից
Բողոք

Ձերբակալուել եմ Հայկական ՍՍՌ ՆԳԺԿ մարմինների կողմից Մարտի 16, 1938ին, Երեւան քաղ[աք]ում, եւ, ինչպէս ինձ համար պարզ դարձաւ ընդամէնը մէկ ժամ տեւած քննութեան ընթացքում, այն բանի համար, որ անդամ եմ եղել Երեւան քաղ[աք]ի աւետարանական եկեղեցուն, որը լուծարուել է Մարտի 2ին, 1938ին: Քննութեան արձանագրութիւնը կազմուել էր ռուսերէն: Հալածանքներից վախենալով՝ ես ստորագրել եմ արձանագրութիւնը, չիմանալով դրա բովանդակութիւնը, քանի որ ռուսերէնից անգրագէտ եմ: Վերջերս ինձ ՆԳԺԿից փոխադրեցին Երեւան քաղ[աք]ի Կենտրոնական բանտ: Նախքան կալանաւորական հանգրուանը, 1938 Մայիսի 30ին ինձ յայտարարուել է իմ բանտարկութեան մասին ՆԳԺԿ Եռեակի որոշումը՝ 10 տարի ժամկէտով աշխատանքային ուղղիչ ճամբար:

Ես ապրած էի այդ որոշմամբ, քանի որ Ստալինեան Սահմանադրութիւնը նախատեսում է խղճի և կրօնի ազատութիւն բոլոր քաղաքացիների համար, և այժմ ես արդարութիւնը փնտռում եմ Ձեզ մօտ:

Ծնուել եմ 1893ին Թուրքիայում, Վանի վիլայէթում: Կեանքիս երրորդ տարում զրկուել եմ հօրից, և այրի մայրս դժուարութեամբ էր պահում մեր ընտանիքը: Տասներեք տարեկանից հարկադրուած էի Վանում դերձակի մօտ աշակերտ դառնալ: Ահա արդէն 32 տարի է ինչ զբաղւում եմ քաղաքատպէս իմ աշխատանքով (դերձակ)՝ չունենալով ոչ մի սեփականութիւն: 1915ին մեր ընտանիքը գաղթել է Երեւան ք[աղաք], որտեղ և գտնւում է ներկայումս: Ահա և իմ ողջ անցյալ կենսագրութիւնը:

Ելնելով վերոշարադրուածից՝ խնդրում եմ Ձեզ վերանայել իմ նկատմամբ Հայկական ՍՍՌ ՆԳԺԿ եռեակի ոչ ճիշտ որոշումը, ազատել ինձ և հնարաւորութիւն տալ, որպէսզի մեծացնեմ իմ հինգ մանկահասակ երեխաներին, որոնք առանց կերակրողի են մնացել, որով հնարաւորութիւն կը տաք ինձ նաև սոցիալիստական շինարարութեան ֆրոնտում ապացուցել իմ անմեղութիւնը և՝ ապացուցել Ստալինեան Սահմանադրութեամբ ինձ տրուած իրաւունքը:

Ե. Տ.-Գալուստեան

15 Փետրուար, 1939
Իրբիտ ք[աղաք], Սվերդլովսկի մարզ
ՆԳԺԿ Սեւուրալլագի ճամբարային կէտ (թ. 18ա-բ,19) (ռուս.)

* * *

1939 Ապրիլի 15ին Հայկ[ական] ՍՍՌ Ներքին գործերի ժողկոմ, Պետ[ական] անվտանգութեան ժողկոմ Կորոտկովը հաստատել է ՆԳԺԿ քննչ[ական] բաժնի քննիչ, Պետ[ական] անվտ[անգութեան] քննիչ Գէորգեանի եզրակացութիւնն այն մասին, որ Տէր-Գալուստեանն իրքը ճանաչել է իր մեղքը, նաև, հիմնուելով Միքոյեան Ե. Ա.ի և Սանուկեան Տ. Գ.ի ցուցմունքների վրայ,

__ՈՐՈՇԵԼ Է.__

«Հայկ[ական] ՍՍՌ Եռեակի որոշումը համարել ճիշտ և թողնել ուժի մէջ: Տէր-Գալուստեան Երուանդ Գալուստովիչի յայտարարութիւնը մերժել, որպէս չհիմնաւորուած, ինչի մասին յայտնել իրեն» (թ. 21-22): (ռուս.)

* * *

Նոյնը հաստատել է նաև Հայկ[ական] ՍՍՌ դատախազի տեղակալ Ե. Խաչիկեանը, երբ Յատուկ գործերի բաժնի դատախազ Կոցնելյանը, Եռեակի նկատմամբ Տէր-Գալուստեանի բողոքի հիման վրայ, «...ուշադրութեան առնելով, որ Եռեակի որոշումը համապատասխանում է եղած գործի նիւթերին և, առաջնորդուելով Հայկ[ական] ՍՍՌ ՔԴՕ 392 յօդուածով,

__ՈՐՈՇԵԼ Է.__

Համաձայնել Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ քննչ[ական] բաժնի քննիչի եզրակացութեան հետ: 15/IV-39 Եռեակի որոշումը ուժի մէջ թողնելու մասին ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ յայտարարութիւնը թողնել առանց բաւարարման և հսկողական վարոյթը կարճել» (թ. 23): (ռուս.)

* * *

1961 թ. Ապրիլի 3ին Երուանդ Տէր-Գալուստեանի կինը դիմել է Ներքին գործերի մինիստրի տեղակալ Ղազարեանին, խնդրելով փաստաթուղթ այն մասին, թէ ինչու է դատուել իր ամուսինը, եւ՝ որ, ըստ Ներքին գործերի մինիստրութեան յայտարարութեան, Ե. Տէր-Գալուստեանը մահացել է աքսորավայրում 1943 թ.: Ապա՝ 1961 թ. Ապրիլի 15ին, խնդրել է վերանայել ամուսնու դէմ յարուցուած գործը եւ տալ արդարացման տեղեկանք (թ. 26-27): (հայ.)

* * *

1961 թ. Մայիսի 17ին վկայ, քաղաքացի Ամիրեան Արիստակէսը, հարցաքննուելիս, ասել է. «...Երուանդ Տէր-Գալուստեանին որպէս հարեւան ճանաչում եմ վաղ ժամանակից: Նրա հետ ընկերութիւն եւ բարեկամութիւն չեմ արել: Նա արհեստաւոր մարդ էր՝ դերձակ էր, գիշեր ու ցերեկ աշխատում էր, իր բազմանդամ ընտանիքը պահում: Ես նրա կողմից որեւէ դժգոհութիւն կամ հակասովետական արտայայտութիւն չեմ լսել: Նա անգրագէտ մարդ էր, եւ այդ է պատճառը, որ հաւատացեալ էր, յաճախ էր գնում եկեղեցի, սակայն այդ անուան տակ ... նրա կողմից ոչինչ չեմ նկատել: Նրան ճանաչող ամբողջ հարեւանութիւնը կը վկայի, որ նա հակասովետական անձնաւորութիւն չի եղել» (թ. 29բ): (հայ.)

* * *

Մէկ այլ վկայ Մարկոս Ղարիբեանը 1961 թ. Մայիս 17ին ասել է. «Ես նրան (Երուանդ Տէր-Գալուստեանին - Ք.Ա.) գիտեմ որպէս խելօք ու խեղճ, համեստ մարդու: Նա միշտ աշխատանքում եղել է դերձակ եւ աշխատասէր, պահել [է] իր ընտանիքը: Նրա մեղքն եղել է այն, որ հաւատացեալ էր ու հոգեւորականների հետ միշտ գնում էր եկեղեցի: Նեղանում էր, որ մենք վրան ծիծաղում էինք, թէ ինչ ես հասկանում այդքան գնալուց: Ասում էր, որ ես մեռնեմ իմ հոգին կը գնայ դրախտ, եւ՝ այլ բաներ: Ես երբեք չեմ նկատել, որ նա պրովոկացիոն լուրեր տարածի Սովետական իշխանութեան հասցէին կամ թէ՝ դժգոհութիւն յայտնած լինէր: Այդպիսի մեղադրանքը նրա նկատմամբ ճիշտ չի, նա համարեա թէ անգրագէտ մարդ էր եւ բացի հոգեւորական աշխատանքից ուրիշ ոչինչ չէր պատկերացնում:

Ցուցմունքս գրուած է իմ բառերով, կարդացուած է, ճիշտ է, որի համար ստորագրում եմ» (թ. 30բ): (հայ.)

* * *

1961 թ. Մայիսի 17ին քաղաքացի Սիսակ Մանուկեանը վկայել է. «...Մանկութիւնից ճանաչում եմ Երուանդ Տէր-Գալուստեանին: Նրա հետ ընկերութիւն եւ բարեկամութիւն չունեմ: Ես որքան նրան ճանաչում եմ, գիտեմ որպէս խելօք, համեստ ու անշառ մարդու, ընտանիքով նա ծանրաբեռնուած էր: Ինքը մասնագիտութեամբ պայտառող էր եւ միշտ գիշեր ու ցերեկ աշխատում էր, որ կարողանար իր ընտանիքը պահել, նա կիսագրագէտ, բայց հաւատացեալ մարդ էր, սակայն նրա կողմից հակասովետական-պրովոկացիոն լուրեր Սովետական իշխանութեան հասցէին կամ թէ՝ որեւէ դժգոհութիւն չեմ տեսել: Կոնկրետ թէ ինչ յանցանքի համար են նրան դատապարտել, ես ոչինչ չգի-

տեմ, բայց ես օրգանի հետ կապուած եմ եղել՝ նրա մասին ոչինչ չեմ լսել եւ չգիտեմ: Ես, որպէս մայր, գտնում եմ, որ Երուանդը անհիմն կարգով է դատապարտուել:

Ցուցմունքս գրուած է իմ բառերով, կարդացուած է, ճիշտ է, որի համար ստորագրում եմ» (թ. 31բ): (հայ.)

* * *

Հայկ[ական] ՍՍՌ Դատախազ
Ընկ[եր] Ա. Գէորգեանին
Երեւանի Պռոշեան փող[ոցի], թիւ 27 տան բնակիչ
Հենրիկ Երուանդի Գալստեանից

Դիմում

1938 թ. Մարտի 16ին Ներքին Գործերի Մինիստրութեան կողմից հայրս՝ Երուանդ Գալուստի Տէր-Գալստեանը բանտարկուեց եւ եռեակի կողմից ենթարկուեց ազատազրկման 10 տարի ժամկէտով:

1943 թ. մեզ հասած տեղեկութիւններով հայրս վախճանուել է արտորավայրում՝ Սվերդլով[սկ]ի մարզի Իվդել քաղաքում: Մեր ընտանիքը բաղկացած էր 6 անձից՝ մայրս, երեք քոյրերս, ես եւ եղբայրս:

Այժմ քոյրերս այլեւս չեն աշխատում՝ տնային տնտեսուհի են, ես աշխատում եմ 26 Կոմիսարների շրջանի շինվերանորոգման գրասենեակում որպէս գլխաւոր ինժեներ, եղբայրս՝ Գալստեան Վարդանը աշխատում է էլեկտրոտեխնիկական գործարանում որպէս ցեխի վարպետ, մայրս տնային տնտեսուհի է:

Ես եւ եղբայրս շուրջ 20-25 տարի է (աշխատում ենք 12 տարեկան հասակից), որ աշխատում ենք սովետական հիմնարկ-ձեռնարկութիւններում եւ միշտ էլ արժանացել ենք խրախուսանքի եւ պարգեւատրման. այդ մասին են վկայում կից ներկայացուած բնութագրերը:

Հօրս բանտարկութիւնից յետոյ մեր ընտանիքի պատիւը բարոյապէս ընկել է եւ մինչեւ օրս չի վերականգնուած: Մենք, յատկապէս ես եւ եղբայրս, երիտասարդ ենք, եւ բարոյականը մեզ համար ունի մեծ նշանակութիւն: Խնդրում եմ հաշուի առնել այդ կարեւոր հանգամանքը, վերանայել հօրս նկատմամբ յարուցուած գործը՝ արդարացնելու համար, որպէսզի վերականգնուի մեր ընտանիքի պատիւը:

Դիմող՝ Գալստեան Հ.

18/V-61 թ. (թ. 32) (հայ.)

* * *

Կից ներկայացուած է Հենրիկ Գալստեանի (ծ. 1923ին, բարձրագոյն կրթութեամբ) բնութագիրը աշխատավայրից «Աշխատանքի ընթացքում ընկ[եր] Գալստեանը դրսեւորել է իրեն որպէս ակտիվ, գործունեայ եւ եռանդուն աշխատող, իր վրայ դրուած աշխատանքները իրականացնում է ժամանակին, ազնուօրէն ու տեխնիկապէս գրագէտ: Ընկ[եր] Գալստեանը կոլեկտիվի շրջանում վայելում է մեծ հեղինակութիւն եւ յարգանք» (թ. 33): (ռուս.)

* * *

Վարդժան Գալստեանի (ծ. 1929) (Հենրիկ Գալստեանի եղբայրը - Ք.Ա.) աշխատավայրից ներկայացուած բնութագրում ասւած է. «Գործարանում աշխատելու ընթացքում ընկ[եր] Գալստեան Վ.Ն իրեն դրսեւորել է որպէս կարգապահ աշխատող, աշխատանքը ճիշտ կազմակերպելու եւ իրենց առջեւ կանգնած խնդիրները լուծելու համար ցեխի կոլեկտիւը մոբիլիզացնելու կարողութեամբ: Ակտիւ մասնակցութիւն է ունեցել գործարանի հասարակական կեանքին: Աշխատում է իր քաղաքական մակարդակի բարձրացման վրայ: Վայելում է աշխատաւորների եւ ԻՏՌ (ռուսերէն յապաւում - Ք.Ա.) գործարանի հեղինակութիւնը» (p. 34): (ռուս.)

* * *

1961 թ. Մայիսի 31ին ՀՍՍՌ դատախազի առաջին տեղակալ, արդարադատութեան երրորդ դասի պետական խորհրդական Եու. Պոկրասեանը, այրի Կատերինա Գալուստեանի դիմումի հիման վրայ «դստ Տէր-Գալուստեան Երուանդ Գալուստի մեղադրանքին» «բողոք հսկողական կարգով» ներկայացրել է ՀՍՍՌ Գերագոյն դատարանի Քր[էական] գործերի դատական կոլեգիային՝ միջնորդելով «Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ եռեակի 1938 թ. Փետրուարի 28ի որոշումը, ըստ Երուանդ Գալուստի Տէր-Գալուստեանի մեղադրանքի, բեկանել եւ գործը վարոյթում կարճել յանցակազմի բացակայութեան պատճառով» (p. 35-36): (հայ.)

* * *

ՈՐՈՇՈՒՄ թիւ 5/98 (ԳԱՂՏՆԻ) (հայ.)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ

Գերագոյն դատարանի քրէական գործերի կոլեգիան

1961 թ. Յունիսի 24ին հետեւեալ կազմով՝

Նախագահութեամբ՝ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

Անդամակցութեամբ՝ ԽԱՆԱՄԻՐԵԱՆԻ, ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԻ

Մասնակցող դատախազ՝ ՂԱՄԲԱՐԵԱՆԻ

Քննեց դատական նիստում Գերագոյն դատարանի անդամ Բաղդասարեանի զեկուցմամբ Հայկ[ական] ՍՍՌ Դատախազի առաջին տեղակալի հսկողական բողոքը ՀՍՍՌ ՆԳԺԿի եռեակի 1938 թ. Փետրուարի 28ի որոշման դէմ, ըստ Երուանդ Գալուստի Տէր-Գալուստեանի մեղադրանքի, ծնուած 1893 թ. Վան քաղաքում, ազգութեամբ՝ հայ, գրագէտ, ամուսնացած, անկուսակցական, բնակւում էր Երեւանում, Տէրեան փողոցի թիւ 35ում:

ՀՍՍՌ ՆԳԺԿի եռեակի վերոյիշեալ որոշմամբ Ե. Գ. Տէր-Գալուստեանը դատապարտուել է տասը տարուայ ազատազրկման այն բանի համար, որ, լինելով հակասովետական, պրովոկացիոն լուրեր է տարածել Սովետական իշխանութեան հասցէին եւ կատարել է հակայեղափոխական աշխատանք:

Բողոքը բերուած է եռեակի որոշումը բեկանելու եւ գործը վարոյթում կարճելու առումով:

Նման զեկուցումը եւ դատախազի եզրակացութիւնը բողոքը պաշտպանելու մասին եւ ծանօթանալով գործի տուեալներին ու բողոքում բերուած փաստարկումներին, կոլեգիան գտաւ, որ բողոքի հետ պէտք է համաձայնուել հետեւեալ հիմունքներով.

Գործի նիւթերից երեւում է, որ Տէր-Գալուստեանին դատապարտելու համար հիմք է հանդիսացել միայն իր ցուցմունքն այն մասին, որ, լինելով հաւատացեալ, յաճախել է եկեղեցի: Մեղադրանքի այն մասը, որ նա հակասովետական աշխատանք է կատարել, գործի տուեալներով չի հաստատուած, իսկ մեղադրեալն էլ իրեն մեղաւոր չի ճանաչել:

Նոր ստուգմամբ հարցաքննուած վկաներ Արիստակէս Ամիրեանը, Մարկոս Ղարիբեանը եւ Միսակ Մանուկեանը իրենց ցուցմունքներում նշել են, որ նրա (Ե. Տէր-Գալուստեանի - Ք.Ա.) կողմից առհասարակ հակասովետական արարքներ չեն նկատել, որ նա, լինելով անխռովարար մարդ (դերձակ), զբաղուել է իր ընտանիքի հոգսերով ու քաղաքական կեանքով չի հետաքրքրուել:

Այսպիսով պարզւում է, որ Տէր-Գալուստեանը վերոյիշեալ մեղադրանքում անհիմն է դատապարտուել, որովհետեւ նրա արարքներն իրենց մէջ յանցակազմ չեն պարունակել:

Վերոգրեալների հիման վրայ եւ ղեկավարուելով քր[էական] դատ[ավա]րութեան] օր[ենսգրքի] 395 յ[օդուածով]՝ Հայկական ՍՍՌ Գերագոյն դատարանի քրէական գործերի դատական կոլեգիան

ՈՐՈՇԵՑ

ԲԵԿԱՆԵԼ ՀՍՍՌ ՆԳԺԿի եռեակի 1938 թ. Փետրուարի 28ի որոշումն ըստ Երուանդ Գալուստի Տէր-Գալուստեանի մեղադրանքի եւ գործը վարոյթում կարճել յանցակազմի բացակայութեան պատճառով:

Նախագահող՝ ԱՌԱՔԵԼԵԱՆ
Անդամներ՝ ԽԱՆԱՄԻՐԵԱՆ, ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ (թ. 38)

### ՅԱՊԱՒՈՒՄՆԵՐ ԵՒ ԲԱՌԱՐԱՆ

*ԱԱՆ - Ազգային Անվտանգութեան Նախարարութիւն (Նախկինում՝ Պետական Անվտանգութեան Կոմիտէ)*

*Ամերկոմ - Միացեալ Արեւելքում Ամերիկեան Օգնութեան Կոմիտէ* (American Committee of Near East Relief)

*Անդրկովկասի ԽՖՍՀ (ԶՍՖՍՌ) - Անդրկովկասի Խորհրդային Ֆեդերատիւ Սոցիալիստական Հանրապետութիւն* (1922-1936)

*անպարտաճանաչ - անհուսալիական*

*աշխոյժ - աշխատանքային ընկերակար*

*արտոյրանս - արտասահմանեան լրտես*

*ատենախօսութիւն - արխանախնդրութիւն*

*բանդիտ - ցրուարդ*

բանֆակ - բանվորական ֆակուլտետ՝ Հանրակրթական ուսումնական հաստատություն ԽՍՀՄ-ում մեծահասակների համար։ Գործել է 1919-1940

գործ. - գործել, աշխատել

գործկոմ - գործադիր կոմիտե

դաշն. - դաշնակցական

դեպո (depot) - պահեստ, շոգեքարշերի և վագոնների նորոգման արհեստանոց, կայան

ԵՊՀ - Երևանի Պետական Համալսարան

Եռյակ (Տրոյկա - ռուս.) - ստալինյան բռնատիրության տարիներին ՆԳԺԿ համակարգում գործող և վերջնական դատավճիռ կայացնող երեք հոգուց բաղկացած դատական բարձրագույն ատյան. 1936-1937-ին Հայաստանում բռնությունները իրականացնող Եռյակը ղեկավարում էր տխրահռչակ Խաչիկ Մուղդուսին (Աստվածատրյան), որը հազարավոր անմեղ հայրենակիցների բնաջնջման է դատապարտել։

երկ. գիծ - երկաթգիծ

Երքաղշին - Երևանի քաղաքային շինարարություն

էշելոն - շարք

էվանգելիստ - ավետարանական

թ. - թուղթ

ինֆորմացիա - տեղեկություն

հավաքր. պունկտ - հավաքային կետ

Լենքաղ. - Լենինական քաղաք

ԽՄԿԿ - Խորհրդային Միության Կոմունիստական Կուսակցություն (նախկինում ՌԿ(բ)Կ, ՀամԿ(բ)Կ, ՍՄԿԿ)

ԽՍՀՄ - Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն (նախկինում ՍՍՌՄ, ապա՝ ՍՍՀՄ)

[illegible]

ԿԳԲ - Կարճված Գործերի Բաժին

կոլխոզ - կոլեկտիվ տնտեսություն (ռուս.), համայնական տնտեսություն

Կոնտրռևոլյուցիոն - հակահեղափոխական

կուլակ - ունևոր գյուղացի, ընդունված էր իբրև հակախորհրդային տարր

հայ. - հայերեն

Հայաստ. Խ. Ս. Հ./ՀԽՍՀ - Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն (նախկինում ՍՖՍՌ, ՀՍՍՌ, ՀՍՍՀ, ՀԽՍՀ)

Հայառկոոպ - Հայկական առևտրաարդյունաբերական արտադրության կոոպերացիա

ՀՀ — Հայաստանի Հանրապետություն

հ.-հ. - հակա-հեղափոխական

հ.-ս. - հակա-սովետական

ՀՍՍՌ/Հ - Հայաստանի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա Հանրապետություն

ՀՕԿ - Հայաստանի Օգնության Կոմիտե, 1921 - 1937

ՄՊՔՎ - Միացյալ Պետական Քաղաքական Վարչություն (հետագայում ՊԱԿ)

Նախ. ԱՍՍՌ - Նախիջևանի Ավտոնոմ (Ինքնավար) Սովետական Սոցիալիստական Հանրապետություն

Նարկոմ (Ժողովրդի կոմիսար - ռուս.) - Ժողովրդական կոմիսար (հետագայում մինիստրություն, նախարարություն)

ՆԳԺԿ - Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատ

նեմեցկական - գերմանական

նորմա - կանոն

ՇԳԿ - Շրջանային Գործադիր Կոմիտե

չինովնիկներ - չինավորական անձինք (պաշտոնյաներ)

չինովնիկավարություն - չինավորական վերնախավություն

ՊԱԿ - Պետական Անվտանգության Կոմիտե (ռուս. ԿԳԲ)

ՊԱՋ - Պատժի Առանձնակարգի Ջոկ

ՊԱՎ - Պետական Անվտանգության Վարչություն

պարտնոյ - ղեկավար (ռուս.)

պրովոկացիա - սադրանք

պրոցեսսուալ - ընթացակարգային

ՊՔՎ - Պետական Քաղաքական Վարչություն (հետագայում ՊԱԿ)

ռեպրեսիա - բռնաճնշում

ռեաբիլիտացիա - հանրապաշտպանություն

ՌՍՖՍՀ - Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն

ռուս. - ռուսերեն

սանատորիա - առողջարան

սանկցիա - արտոնություն

սանհանգիստ - սանատորիական (առողջարանային) հանգիստ

սեկտա - աղանդ

սեկցիա - խմբակ

Սոլովեցկի (Սոլովկի կղզիներ - ռուս.) - Հյուսիսային ուղղման ճամբար

ս. թ. - այս թվական

ՍՄԿԿ ԿԿ - Սովետական Միության Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտե (հետագայում ԽՄԿԿ ԿԿ)

սով. ապարատ - սովետական աշխատակազմ

սովիշխ. - սովետական իշխանություն

սովկարգեր - սովետական կարգեր

սպիտակներ - նկատի ունի Հակաբոլշևիկյան Սպիտակ Գվարդիականներին՝ - 1917-1921 թթ. Ռուսաստանի քաղաքացիական պատերազմի օրերին

ՍՍՀՄ - Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն (հետագայում ՍՍՀՄ, ապա՝ ԽՍՀՄ)

Վ. - Վերին
վալիւտա - դրամարժոյթ
ՎՍՆԽ (Վսեսոյուզնիյ Սովետ Նարոդնովո Խոզյայստվա - ռուս.) - Ժողովրդա-կան Տնտեսութեան Համամիութենական Խորհուրդ
տեխնիկում - մասնագիտական միջնակարգ դպրոց
[illegible]
տրոցկիստա-զինովեւականութիւն - ՍՍՀՄ Համամիութենական Կոմունիստա-կան Բոլշեւիկեան Կուսակցութեան (ՀամԿ(բ)Կ) ներսում 1926-1927-ին ձեւաւորուած ընդդիմութիւն (ղեկավարներ՝ Լ. Դ. Տրոցկի, Գ. Ե. Զինովեւ, Լ. Բ. Կամենեւ)
ցիտատ - մէջբերում
ՈւԱՃ - Ուղղիչ Աշխատանքային Ճամբար, որտեղ ազատազրկման դատապարտուած հասարակութեան վտանգ ներկայացնող տարրերը կրում էին իրենց պատիժը: Առաւել վտանգաւոր տարրեր էին համարւում քաղաքական անհատականութիւններով դատապարտուածները
քաղպարապմունք - քաղաքական պարապմունք
Քաղսովետ - Քաղաքային սովետ / խորհուրդ
ՔԴՕ / քր. դատ. օր. - Քրէական Դատավարութեան Օրէնսգիրք
ՔՕ / Քր. Օր. - Քրէական Օրէնսգիրք
օպերլիազոր - օպերատիւ լիազօր
ֆաբրիկա - գործարան
ֆայտոն - ձիով կառք
ֆրաու - տիկին (գերմ.)
ֆրոնտ - ճակատ (ռազմ. ոլորտ)

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Այստեղ յիշատակում ենք մեզ բռնադատուած այլ հայ աւետարանական-ներ, սակայն նրանց յետագայ ճակատագրի մասին տեղեկութիւններ չեն յայտնաբերուել մեզ: Իսկ յիշատակուած Սարգիս Սարգսեանի վերաբերեալ գործ չի յայտնաբերուել:

2 Արմենակ Մանուկեան, *Հայ Առաքելական Եկեղեցու Բռնադատուած Հոգե-ւորականները 1930-1938թթ. (Ըստ ՊԱԿ-ի Փաստաթղթերի)*, Երեւան, «Մհրագ», 1997: Նոյնի՝ *Քաղաքական Բռնաճնշումները Հայաստանում 1920-1953թթ.*, Երեւան, «Աոնրեսուսձ», 1999; *Քաղաքական Կեանքը Հայաստանում 1920-1940թթ.*, Երեւան, 2002:

3 Վեր. Եղիա Քասունի, *Լուսաշաւիղ. Պատմութիւն Հայ Աւետարանական Շարժման. 1846-1946*, Պէյրութ, 1947:

4 Արտաշէս Ղազարեան եւ Վեր. Ռընէ Լեւոնեան, *Հայաստանեայց Աւետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս)*, Երեւան, «Հայկական Հանրագիտարան» հրատարակչութիւն, 1999:

5 Ղազարեան եւ Լեւոնեան, էջ 21:

6 Քասունի, էջ 469:

7 ՀՀ ԱԱԾ արխիւ, Պատմական ֆոնդ, գործ 278; Մանուկեան, 1997, էջ 28-29, 35:

8 Մանուկեան, 1999, էջ 126:

9 Մանուկեան, 1997, էջ 14:

## THE PURGED PASTORS OF THE ARMENIAN EVANGELICAL CHURCH, BASED ON KGB DOCUMENTS (1937-38)

(Summary)

KNARIK AVAKIAN

Soviet Armenia, like other parts of the Soviet world, witnessed a fierce anti-religious campaign from the first days of the Communist regime. Many churches were closed down and destroyed; Armenian Apostolic, Catholic and Evangelical clergymen were persecuted.

The documents published, introduced and annotated by Knarik Avakian focus on the purge of Armenian Evangelical pastors in Armenia. Rev. Vahan Mikayelian, one of the very first in this group, was exiled to and died in Siberia. The documents detail the interrogation of Revs. Rafayel Melik-Adamian, Trdat Manukian, Yeprem Mkrtchian and Yervand Ter-Galoustian. They were all charged with treason, found guilty in hastily-arranged political trials, imprisoned and eventually either exiled or shot. Avakian was unable to trace archival documents regarding the case of a fifth Armenian Evangelical pastor, Sargis Sargsian.

Avakian notes that the pastors were forced to sign translated, Russian language versions of their alleged testimonies, without actually being able to read or understand Russian. The whole process of apprehension, interrogation and execution did not last for more than a few days. Their appeals to higher courts were turned down. However, they were all eventually rehabilitated after Stalin's death. The relevant court then admitted that there was no evidence to prove their actual guilt.